Սահմանադրական դատարանը մերժեց ընտրությունների արդյունքները վիճարկող քաղաքական 7 ուժի դիմումներն ու ուժի մեջ թողեց հունիսի 7-ի ընտրությունների վերաբերյալ ԿԸՀ որոշումը:

Չորեքշաբթի
8 հուլիսի 2026թ.
№ 9 (659)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am



Ագարակի կոմբինատը շարունակում է լինել Մեղրու տարածաշրջանի զարգացման գլխավոր գրավականը

Վերջին ժամանակներս Ագարակ քաղաքում կառուցապատման և շիննորոգման զգալի գործեր են իրականացվել, որոնցում նշանակալի է «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության դերը: Ընկերությունն ըստ ամենայնի շարունակում է հանդես գալ որպես քաղաքաստեղծ ձեռնարկություն: Կոմբինատում նաև էական աշխատանքներ են կատարվել նոր տեխնիկայի ու տեխնոլոգիայի ներդրման, մարդկանց աշխատանքային պայմանների բարելավման ուղղությամբ: Այս և խնդրո առարկային առնչվող (և ոչ միայն) հարցերի շուրջ է հարցազրույցը «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ալեքսանդր Գրիգորևիչ Բելյաևի հետ:

– Ալեքսանդր Գրիգորևիչ, նախ շնորհակալություն՝ այս հանդիպման և հարցազրույցի հնարավորության համար: Տարիներ առաջ Դուք հարցազրույց եք տվել մեր պարբերականին:

Այդ ընթացքում շատ բան է փոխվել, և հիմա առաջին պլան են մղվել այլ հարցեր:

Առաջին հարցով կուզենայինք ճշտել համայնք-կոմբինատ հարաբերությունների կամ համագործակցության վիճակը:

Կոնկրետ՝ ընթացիկ տարում ի՞նչ ծրագրեր եք իրականացնում կամ ի՞նչ ծրագրեր ունեք:

– Արդեն չորրորդ տարին է՝ ինչ ղեկավարում եմ ընկերությունը: Այդ ընթացքում Մեղրի համայնքի հետ գործնական հարաբերություններ և բարեկամական մթնոլորտ է ձևավորվել: Կոմբինատի և համայնքի գործունեությունը սերտորեն առնչվում է միմյանց: Այդ համատեքստում ձևավորված է փոխըմբռնման համագործակցություն, որը գնալով ավելի պիտի զարգանա և խորանա: Նախագծեր շատ կան, քիչ հետո մենք կլինենք *(հարցազրույցին ներկա էր նաև Մեղրիի համայնքապետ Խաչատուր Անդրեասյանը, խմբ.)* մանկական մարզահրապարակում, կտեսնենք՝ ինչպես են կառուցել:

Շարունակությունը՝ էջ 3

Ռոման Նավասարդյան. «Առանց ներքին խաղաղության և ազգային համախմբվածության, առանց ազգային ոգու և արժանապատվության վերականգնման չի կարող լինել խաղաղություն»



Սյունիքի մարզպետ (1998-2000 թթ.), հանքարդյունաբերության ճանաչված կազմակերպիչ, Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի գլխավոր տնօրեն (1994-1998 թթ.) Ռոման Նավասարդյանի հետ հանդիպելն ու զրուցելը միշտ սպասված են եղել...

Ռացիոնալ մտածելակերպ ու վերկուսակցական պահվածք կրող, մեր կյանքի յուրաքանչյուր ոլորտում պրոֆեսիոնալիզմն ամեն ինչից վեր դասող, պետությունն ու պետականությունը բարձրագույն արժեք համարող, մարզպետական կառավարման ներկա ձևն անիմաստ համարող, պետական

Շարունակությունը՝ էջ 4

Որտեղի՞ց հայտնվեց «300 հազար ադրբեջանցիների վերադարձի» թեզը, և ի՞նչ են ցույց տալիս պաշտոնական թվերը

Վերջին ամիսներին մեր քաղաքական և մեդիա դաշտում դժվար է մտաբերել մեկ այլ թեմա, որը նույնքան արագ տարածվի, որքան «300.000 ադրբեջանցիների» թեզը: Թեման դարձավ նախընտրական գլխավոր խոսույթներից մեկը, ու թեև ընտրություններն ավարտվել են, քննարկվում է մինչ օրս: Ճի՞շտ է արդյոք այդ թիվը, և ի՞նչ է ցույց տալիս պաշտոնական վիճակագրությունը:

Որտեղի՞ց է ծագել «300 հազար ադրբեջանցիների վերադարձի» թեզը

2024 թ. դեկտեմբերի 18-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հարցազրույց է տվել ռուսական «Ռոսիա» պետական հեռուստաընկերությանը և «ՌԻԱ Նովոստի» (РИА Новости) գործակալությանը: Լրագրողի՝ Արցախում մնացած հայերի վերաբերյալ հարցին ի պատասխան նա նշել է, որ այնտեղ, վերջին տվյալներով, ապրում է շուրջ 20 հայ, որոնք, ըստ նրա, շարունակում են սոցիալական աջակցություն ստանալ Ադրբեջանի սոցիալական ապահովության նախարարությունից:

Խոսելով այդ թեմայի շուրջ՝ Ալիևն անդրադարձել է նաև Հայաստանից «տեղահանված» ադրբեջանցիների վերադարձի հարցին. **«1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին Հայաստանից տեղահանված ադրբեջանցիների համայնքը, որի կազմում մոտ 300 հազար մարդ կա, պաշտոնապես դիմել է Հայաստանի ղեկավարությանը՝ խնդրելով իրենց համար ևս ստեղծել վերադարձի և արդեն Հայաստանում վերաինտեգրման պայմաններ: Այն, որ նրանք 1990-ականների սկզբին արտաքսվել են այնտեղից, չի նշանակում, թե կորցրել են վերադառնալու իրավունքը: Մենք մինչ օրս Հայաստանի ղեկավարությունից պատասխան չենք ստացել, թե ինչպես են պատկերացնում ադրբեջանցիների վերաինտեգրումն իրենց պատմական հողերում»:**

«Պատմական հողեր» ասելով՝ Ադրբեջանի նախագահը նկատի ունի ներկայիս ՀՀ ինքնիշխան տարածքը, որն իր իսկ քարոզչամեքենան անվանում է «Արևմտյան Ադրբեջան»:

Թեև պաշտոնական Բաքուն խոսում է խաղաղության գործընթացից, զուգահեռ իրականությունում շարունակում է զարգացնել «Արևմտյան Ադրբեջան» թեզը: Վերջին տարիներին այս թեմայով անցկացվել են բազմաթիվ միջոցառումներ, համաժողովներ ու քննարկումներ:

Քարոզչական այս միջոցառումների հետևում կանգնած է «Արևմտյան Ադրբեջանի համայնք» կազմակերպությունը, որը ստեղծվել է 1989-ին և նախապես կոչվում էր «Ադրբեջանի փախստականների միություն», սակայն 2022-ի օգոստոսին անվանափոխել է:

«Հետքը» գրել է, որ այս կազմակերպությունն իրականում պետական մակարդակով առաջ մղվող ծավալապաշտական, հակահայկական ծրագրի կատարողն է, բայց «Արևմտյան Ադրբեջան» ծրագիրն ու դրա շրջանակներում իրականացվող տարբեր միջոցառումների գլխավոր պատվիրատուն Ադրբեջանի նախագահի աշխատակազմն է: Մասնավորապես՝ 2023-ի դեկտեմբերից ամեն տարի Ադրբեջանում կազմակերպվում են միջազգային կոնֆերանսներ «Հայաստանից վտարված ադրբեջանցիների անվտանգ և արժանապատիվ վերադարձի» թեմայով:

Փաստն այն է, որ երբ 2022-ի հոկտեմբերի 6-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը Պրահայում ճանաչեց Ադրբեջանի տարածքային ամբողջա-

Շարունակությունը՝ էջ 6

Կապանի միջազգային երաժշտական փառատոնը՝ չորրորդ անգամ

Օր առաջին

Ութ տարի անց Կապանը կրկին հյուրընկալել է անվանի երաժիշտների, երիտասարդ շնորհալի կատարողների և արվեստի սիրահարների: Չորրորդ անգամ՝ հուլիսի 4-ին, մեկնարկեց Կապանի միջազգային երաժշտական փառատոնը: Տասը օր շարունակ Կապանի արվեստի պետական քոլեջի երգեհոնային դահլիճում կհնչեն համաշխարհային ճանաչում ունեցող կոմպոզիտորների ստեղծագործություններ՝ անկրկնելի պահեր պարգևելով հանդիսատեսին:

«Կապան ֆեստ»-ն այս անգամ հյուրընկալել է աշխարհի 16 երկիր ներկայացնող մեծանուն երաժիշտների: Նրանց հետ երեհոնային դահլիճի բեմահարթակում հանդես կգան Երևանից, Հայաստանի տարբեր մարզերից ժամանած 55 երիտասարդ շնորհալի երաժիշտներ ու կապանցի աշակերտներ և ուսանողներ:

Հուլիսի 4-ին տրվեց փառատոնի մեկնարկը: Արվեստի քոլեջի երգեհոնային դահլիճը լեփ-լեցուն էր բարձրակարգ երաժշտության սիրահարներով: Համերգին ներկա էին Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Տիգրան Վիրաբյանը, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանը, պաշտոնատար այլ անձինք, երաժիշտներ, մշակութային գործիչներ, բազմաթիվ հյուրեր:

Համերգը սկսվեց Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի ստեղծագործության կատարումով՝ «Դաշնամուրային քառյակ No.2 մի բեմոլ մաժոր» (դաշնամուր՝ Մարիաննա Շիրինյան, ջութակ՝ Հրաչյա Ավանեսյան, ալտ՝ Իբեն Թայլման, թավջութակ՝ Տոմաս Լունդստրյոմ): Առնո Բաբաջանյանի «Պոեմը» հնչեցրեց դաշնակահարուհի Աննա Սարկիսովան:

Ուրսուլա Ֆոն Լերբերը և Քրիստիան Էրբսլոհ-Փափազյանը դաշնամուրով հնչեցրին Աստոր Պիացոլայի «Լիբերտանգո» ստեղծագործությունը:

Դաշնակահար Ժուլիեն Լիբերը կատարեց Մորիս Ռավելի «Պավան» ստեղծագործությունը:

Նույն կոմպոզիտորի մեկ այլ ստեղծագործություն՝ «Սրճարան 1930», «Տանգոյի պատմություն» գործը կատարեցին Կարեն Շահգալդյանը (ջութակ), Էդուարդ Հրմուշյանը (կիթառ): Համերգային ծրագիրն ավարտվեց Մոցարտի «Հայելի» ստեղծագործությամբ (ջութակահարներ՝ Էլլի Սու, Հայկ Կազազյան):

Փառատոնի կարևոր բաղադրիչներից է «Կապան ֆեստ ակադեմիան», որի շրջանակում աշխարհի տարբեր երկրներից ընտրված երիտասարդ երաժիշտները մասնակցում են ինտենսիվ վարպետության դասերի, հանդիպում միջազգային հեղինակություն վայելող արվեստագետների հետ և բեմ բարձրանում նրանց կողքին:

Ակադեմիայի բացումը տեղի ունեցավ հուլիսի 6-ին: //

Օր երկրորդ

Փառատոնի երկրորդ օրվա՝ հուլիսի 5-ի ծրագիրը՝ խորագիր ուներ՝ «Պատմության հնչյունը», բայց մինչև համերգը սկսվելը փառատոնի գեղարվեստական ղեկավար, թավջութակահար Սևակ Ավանեսյանը մանրամասնեց փառատոնի երկրորդ օրվա ծրագիրը՝ ներկայացնելով նրանում ներառված կոմպոզիտորներին և նրանց անմահ ստեղծագործություններին:

Համերգը սկսվեց Մորիս Ռավելի «Լավանս» ստեղծագործությամբ, որ հանդիսատեսին մատուցեցին Քրիստիան Էրբսլոհ-Փափազյանը և Ուրսուլա վոն Լերբերը (դաշնամուրային կատարում): Հաջորդիվ հնչեց Կլոդ Դեբյուսիի երեք մասանոց «Ջութակի սոնատ սոլ մինոր» ստեղծագործությունը (ջութակահար՝ Հրաչյա Ավանեսյան, դաշնակահար՝ Մարիաննա Շիրինյան):

Հանդիսատեսը հատկապես բուռն արձագանքեց ակորդեոնահար Ռադու Ռատոյի կատարումներին: Երաժիշտը նախ կատարեց Կամիլ Սեն Սանսի «Մահվան պարը» ստեղծագործությունը, այնուհետև հնչեցրեց մոլդովացի ակորդեոնահար, դիրիժոր, կոմպոզիտոր Միհայ Ամիհալաքիոյեի կարճ, վիրտուոզ բնույթի ստեղծագործությունը:

Ընդմիջումից հետո հանդիսատեսին հաճելի պահեր պարգևեց երաժիշտների եռյակը՝ Ժուլիեն Լիբեր (դաշնամուր), Հայկ Կազազյան (ջութակ), Սևակ Ավանեսյան (թավջութակ), նրանք հնչեցրին լայնակտավ մի ստեղծագործություն՝ Ֆելիքս Մենդելսոնի չորս մասանի «Դաշնամուրային տրիո № 2 դո մինոր, օպուս 66» ստեղծագործությունը: Բարձրակարգ մի կատարում, որ բուռն ծափահարություններ և հիացական բացականչություններ կորզեց հանդիսատեսից:

Փառատոնում ևս մի ավանդույթ է ձևավորվել՝ Լոնդոնի «Florian Leonhard Fine Violins» պատմական գործիքների բացառիկ ցուցահանդես, որ կազմակերպվում է երգեհոնային դահլիճին կից սրահում: Այս անգամ ներկայացված էին Գվարներիի, Ստրադիվարիուսի, Պաոլո Տեստոնիի մի քանի դար առաջ պատրաստած գործիքները՝ ջութակ, ալտ, թավջութակ, ընդ որում գործիքներից մեկը թվագրված է 1665 թ.:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Ագարակի կոմբինատը շարունակում է լինել Մեղրու տարածաշրջանի զարգացման գլխավոր գրավականը

Սկիզբը՝ էջ 1

Ձևավորվում է երկրորդ խաղահրապարակը, նաև զբոսայգու հիմք է դրվում, որը կշահագործվի նաև կոմբինատի ֆինանսավորմամբ: Մանկական շատրվաններ կլինեն:

Իմ սեղանին է Ագարակի ստադիոնի պատի վերակառուցման նախագիծը, որի կառուցումը շուտով կսկսենք: Իհարկե, առայժմ պատը, ոչ թե ստադիոնը:

Ընթացիկ տարում հանդիպում ունեցանք Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահի հետ: Մեղրու ստադիոնի վերակառուցումը մեծ նախագիծ է, որը հնարավորություն կտա երեխաներին զբաղվել մասսայական սպորտով, այդ թվում՝ ֆուտբոլով:

Ծրագրերը բազմազան են. դրանցից մեկը երբեմնի Ագարակ գյուղի եկեղեցին է, որ ցանկանում ենք հանքի տարածքից տեղափոխել Ագարակ քաղաք:

– Արտադրական ծավալների մասին խոսենք. ներկայումս որքա՞ն հանքաքար է արդյունահանվում... Փորձեք դա համեմատել նախորդ տարիների հետ: Այսինքն՝ կա՞ աճ, թե՞ նույն չափով է արդյունահանվում, քան, օրինակ, երեք տարի առաջ:

– Այս պահին կոմբինատը տարեկան 4 միլիոն տոննա հանքաքար է արդյունահանում և վերամշակում:

Շեշտը հիմնականում դրվում է աշխատանքի արդյունավետության բարձրացման վրա, այն է՝ ոչ թե ավելի շատ հանքաքար արդյունահանել, այլ եղած հանքաքարից ավելի մեծ տոկոսով խտանյութ կորզել: Այս պահին ստանում ենք այնքան խտանյութ, որքան նախկինում՝ տարեկան 4,5-4,8 միլիոն տոննա հանքաքարի վերամշակումից:

Բառացիորեն մեկ շաբաթ առաջ քննարկեցինք կոմբինատի զարգացման ծրագրերն առաջիկա 5-10 տարվա կտրվածքով: Սեղանիս վրա երեք խոշոր ծրագիր կա, որոնք հնարավորություն կտան հանքաքարի հանույթը հասցնել 6 մլն տոննայի և կոմբինատի գործունեության երկարաձգումն է մինչև 25 տարի:

Հետաքրքիր ծրագրեր են, բայց նաև ծախսատար, ինչը հնարավորություն կտա և՛ կոմբինատի գործունեությունը երկարաձգել, և՛ համայնքը զարգացնել:

– Եվ որքա՞ն աշխատող կա կոմբինատում... Նոր աշխատատեղեր ստեղծվե՞լ են, թե՞ դրա կարիքը չի եղել:

– Այսօր կոմբինատում աշխատում է 1163 մարդ:

Քանի որ քաղաքը հանրապետության ամենահարավում է գտնվում, մարդիկ հետաքրքրված չեն այստեղ գալ: Հրապուրել մարդկանց՝ բերելու Ագարակ, դժվարին գործ է, չնայած աշխատավարձերը կոմբինատում բավականին բարձր են: Ձգտում ենք տեղական կադրերին սովորեցնել, բարձրացնել նրանց մասնագիտական պատրաստվածությունը: Խնդիրը, ինչ խոսք, փոքր-ինչ պրոբլեմատիկ է:

– Աշխարհակարգը մեր աչքի առաջ փլվում է... Դա, կարծում ենք, նորանոր խնդիրներ է առաջացնում և՛ լոգիստիկ առումով, և՛ արտադրանքի (խտանյութի առաքման տեսանկյունից) ու նյութերի, սարքավորումների ձեռք բերման առումով: Կարողանո՞ւմ եք դժվարագույն այս պայմաններում ապահովել կոմբինատի բնականոն գործունեությունը:

– Շատ կարևոր հարց տվեցիք: Մարտ ամսին Իրանում սկսված ռազմական գործողությունները, Հորմուզի նեղուցի փակման հանգամանքը բացասաբար անդրադարձան տարածաշրջանի տնտեսության վրա: Մեզ մոտ արտադրության ծավալները չնվազեցին, և հումքի իրացումն ու սարքավորումների ձեռքբերումը կենտրոնացրեցինք դեպի Չինաստան: Նաև այլ ուղղություններով ենք ուզում գործունեություն ծավալել՝ Վրաստանով, Փոթիով, որ հետագայում այլևս փաստի առաջ չկանգնենք:

– Մեր թերթի վերջին համարում հրապարակեցինք կոմբինատի հարկային

պարտականությունների վերաբերյալ որոշ տեղեկություններ...

1000 խոշոր հարկատուների ցանկում, կարծեք, Ձեր ընկերությունը բարելավել է դիրքերը:

– Պիտի ասեմ, որ վերջին տարիներին մետաղների միջազգային շուկայում աճել են գները, ինչը հավելյալ եկամտի աղբյուր է և հնարավորություն է տալիս որոշ չափով վերազինել ձեռնարկությունը, վճարել լրացուցիչ հարկեր: Ինչ վերաբերում է տեխնիկական վերազինմանը, վերջին ժամանակներս ձեռք ենք բերել հինգ ինքնաթափ մեքենա, երեքը ևս ձեռք բերելու պայմանավորվածություն ունենք, հարստացուցիչ ֆաբրիկայում վեց աղացը փոխարինել ենք նորերով, բառացիորեն վերջերս գործարկել ենք նոր ֆլոտահոսքագիծ: Սպասում ենք նոր բուլդոզերի տեղափոխմանը, մյուսը ձեռք բերելու պայմանագիր ենք պատրաստում: Տեխնիկական վերազինումը չընդհատվող գործընթաց է, մենք էլ անում ենք հնարավորը, որ կոմբինատի աշխատանքները բնականոն հունով ընթանան:

– Մենք տեղյակ ենք՝ Դուք սովորաբար քաղաքական հարցերով չեք զբաղվում... Եվ դա լավ է, բայց մի հարց, այնուամենայնիվ, կուզենայինք պարզել:

Գաղտնիք չէ, որ մեր հանրապետությունում որոշ ուժեր հակառուսականություն են քարոզում: Իհարկե, Այունիքում համաձայն չեն այդ ամենի հետ: Դուք Ագարակում և Մեղրիում զգո՞ւմ եք նման քարոզի հետևանքները:

– Ձեռնարկությունում ես մարդկանց չեմ տարանջատում ըստ ազգային պատկանելության կամ քաղաքական կողմնորոշման: Այլ նրանց գնահատում եմ ըստ պրոֆեսիոնալիզմի, ինչ ազգությամբ էլ ուզում են լինել: Այն համոզումն ունեմ, որ ամեն տեղ մարդն օգուտ պետք է բերի՝ տանը, աշխատավայրում, ամենուր: Երբ արդեն օգուտ չես բերում այս կյանքում, կորցնում ես ամեն ինչի իմաստը:

– Ձեր ընկերությունն անմիջապես Հայաստան-Իրան սահմանի վրա է գտնվում: Հայաստանի բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտներ Իրանի հետ լավ հարաբերությունների մեջ են՝ հատկապես նյութատեխնիկական մատակարարման առումով: Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը գործընկերային հարաբերություններ ունի՞ Իրանի համապատասխան տնտեսվարողների հետ:

– Իրանից հարստացուցիչ ֆաբրիկայի համար ստանում ենք որոշակի քիմիական հակազդիչներ: Իրանը մեզ շատ մոտ է, և լոգիստիկ խնդիրներ չեն կարող ծագել: Ինչ վերաբերում է մեքենասարքավորումներին՝ մենք Մոսկվայում մասնակցում էինք ցուցահանդեսի, որտեղ հանդիպել ենք իրանական մի քանի ընկերության ներկայացուցիչների: Պիտի խոստովանեմ, որ Չինաստանի համեմատ մրցունակ չեն: Երկու տարի առաջ Ագարակում էր Իրանի արդյունաբերության նախարարը: Հետաքրքիր կլիներ ծանոթանալ նրանց արդյունաբերությանը, բայց դա առայժմ չի հաջողվում՝ ժամանակի սղության պատճառով:

– Այս տարի Հայաստանում տեղի կունենա միջազգային կոնֆերանս՝ «COP 17»: Եվ մենք պատրաստում ենք հատուկ համար՝ ցույց տալու այն ամենը, ինչ կատարվում է մարզի կենսաբազմազանության ոլորտում: Կուզենայինք իմանալ՝ ի՞նչ է կատարվում կոմբինատի կողմից՝ շրջակա միջավայրի պահպանման ուղղությամբ:

– Պիտի փաստեմ, որ կոմբինատն արդեն «ծեր» է: Մենք էլ ջանում ենք նվազեցնել արտանետումներն ու արտահոսքերն արտաքին միջավայր, նաև վթարային վիճակ չենք ունեցել: Եվ այն նախագծերը, որ այժմ իրականացնում ենք, միտված են շրջակա միջավայրի չաղտոտմանը: Այդ առումով քննարկում ենք բոլոր նախագծերը, նույնիսկ եղել ենք Չինաստանում և դիտարկել, թե որոշ սարքավորումներ ինչ արդյունք են տալիս, որոնք ներդրվել են այդտեղ հինգ տարի առաջ: Եվ ջանում ենք այդ տեխնոլոգիաները ներդնել մեր կոմբինատում: Եթե դա հաջողվի, ապա Հայաստանի հանքարդյունաբերության համար կլինեն առաջադիմական տեխնոլոգիաներ:

– Արդեն անդրադարձանք համայնք-կոմբինատ համագործակցությանը: Բայց մի հարցի կուզենայինք առանձին հայացք ձգել: Խոսքը Հըգերակի կամ Ագարակի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու մասին է, որ հանքավայրի կենտրոնում է մնացել:

Որքան տեղյակ եմ՝ Ագարակի կոմբինատը և Դուք՝ անձամբ, պատրաստակամություն եք հայտնել՝ մասնակցելու 17-րդ դարի այդ եկեղեցու տեղափոխմանը:

– Այդ նախագծին կոմբինատը լծվել է 2012 թվականից: Անցյալ տարի եկեղեցին տեղափոխելու նախագիծ ենք պատրաստել, եկեղեցու գտնվելու վայրի մի քանի տարբերակ ենք քննարկել Մեղրիի համայնքապետի հետ: Համաձայնեցրել ենք նաև նախարարության հետ, հողհատկացման հարցն է լուծվում: Շատ շուտով կսկսենք եկեղեցին ապամոնտաժել և տեղափոխել Ագարակ: Այդ նախագիծը կարժենա մեկ-մեկուկես միլիոն դոլար:

– Հայաստանի կառավարությունը և՛ Զանգեզուրի ՊՄԿ-ում, և՛ Կապանի լեռնահարստացման կոմբինատում որոշակի բաժնեմաս ունի: Եթե գաղտնիք չէ՝ Ագարակի կոմբինատում նույնպե՞ս կառավարությունը բաժնեմաս ունի:

– Ոչ, կառավարությունն այստեղ մասնաբաժին չունի, կոմբինատը պատկանում է մասնավոր անձանց, ավելի ստույգ՝ ընկերության: Բայց կառավարության հետ ակտիվորեն համագործակցում ենք, ես հանդիպել եմ տարածքային ինքնակառավարման և ենթակառուցվածքների նախարարի հետ: Այնպես որ շփումները շատ սերտ են և գործնական:

– Հանքագործների սոցիալական պաշտպանության մասին...

Ի՞նչ կոնկրետ երաշխիքներ ունեն լեռնագործները... Օրինակ, առողջապահական ապահովագրություն և այլն:

– Մենք ընկերությունում առողջապահական ապահովագրություն ենք ներդրել, որը բավականին պատկառելի գումար է պահանջում, տարեկան 100 միլիոն դրամ ծախսում ենք այդ նպատակով: Ծրագիրն արդեն երեք տարի գործում է: Երեք ապահովագրական ընկերություն ենք փոխել և վերջում կանգ առել մեկի վրա, վատ չենք համագործակցում:

Երկրորդը, ինչի մասին ուզում եմ նշել, երկու-երեք տարի է՝ ինչ հոգում ենք մեր աշխատողների սննդի հարցը, որն ըստ հերթափոխի բաշխվում է աշխատողներին: Օրվա կտրվածքով յուրաքանչյուր աշխատողի սննդի գումարը 1850 դրամ է:

– Մարդիկ գո՞հ են:

– Հիմնականում գոհ են, բայց իհարկե միշտ էլ հարցեր են ծագում: Բառացիորեն անցյալ շաբաթ սննդի փաթեթավորումը փոխել ենք, քանի որ հատկացվող սնունդն անհրաժեշտ էր տաքացնել միկրոալիքային վառարանում, ինչը նախկին փաթեթավորման դեպքում հնարավոր չէր: Նաև ճաշարան ունենալու գաղափար է հղացել, որ մարդիկ լիարժեք սնվեն: Նախագիծը քննարկման փուլում է:

– Մենք քննարկեցինք աշխատողների սոցիալական ապահովվածության խնդիրը: Հետաքրքիր է իմանալ, թե արհեստակցական կազմակերպությունը գործո՞ւմ է ընկերությունում:

– Կոմբինատում կա արհեստակցական կազմակերպություն: Մշտապես համագործակցում ենք նրա հետ, շուտով մետալուրգի և հանքագործի մասնագիտական տոնն է լինելու, որի անցկացման գործում մեծ է արհկոմի դերը: Կոմբինատում քննարկվում է ընկերության աշխատակիցների երեխաների ամառային հանգստի կազմակերպման հարցը:

– Ի՞նչ դժվարություններ կամ խնդիրներ ունի Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը:

– Ես արդեն նշեցի երեք նախագծի մասին, որոնք քննարկման փուլում են:

Իսկ մեր ձեռնարկության արտադրողականության բարձրացումը կոմբինատի երկարակեցության ապահովման գրավականն է:

– Ալեքսանդր Գրիգորևիչ, այսպիսի հասկացություն կա՝ ով լավ է հանգստանում՝ նա լավ էլ աշխատում է: Ինչպե՞ս է կազմակերպվում կոմբինատի աշխատողների ակտիվ հանգիստը և ժամանցը:

– Ես սպորտային ապրելակերպն եմ դավանում: Տղաների հետ միշտ վոլեյբոլ ենք խաղում, Մեղրիի սահմանապահ ջոկատի ծառայողների հետ ենք ընկերական խաղեր անցկացնում այդ մարզաձևից: Առավոտյան առողջարարական վազքով ենք զբաղվում: Անցյալ տարի կոմբինատից 6 հոգի Թբիլիսիում մասնակցել է կիսամարաթոնին: Այս տարի նույն այդ մրցմանն ութ հոգի է ցանկություն հայտնել մասնակցել: Մշտապես մասնակցում ենք ինչ-ինչ միջոցառումների: Շուտով հանքագործի և մետալուրգի օրը պետք է նշենք, ընդգրկուն ծրագիր է մշակվել, հանրահայտ հայ երգիչներ ենք հրավիրել: Հոկտեմբեր ամսին էլ նշվելու է Ագարակ քաղաքի օրը, ինչին ևս նախապատրաստվում ենք, կոմբինատն էլ ձգտում է այդ միջոցառումները ֆինանսավորել:

– Երկար տարիներ է՝ Ագարակում եք, Մեղրիում...

Որքան տեղյակ ենք՝ վաղուց ինտեգրվել եք տեղի ավանդույթներին:

Եվ, այդուամենայնիվ, ի՞նչն է առավել շատ Ձեզ դուր գալիս այստեղ:

– Ընդհանրապես Հայաստանը շատ հետաքրքիր երկիր է, առաջին անգամ՝ Հայաստանում էի 2015 թվականին, եղել եմ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում: Երբ ինձ առաջարկել են աշխատել Ագարակի ՊՄԿ-ում՝ ծանոթացա արտադրությանը, զգացի, որ հետաքրքիր կլինի աշխատել այստեղ: Ինձ դուր է գալիս, որ այստեղ եղանակը տաք է, որ սնունդը, մրգերն ու բանջարեղենը համեղ են, մարդկանց վերաբերմունքը շատ բարեհաճ է: Իհարկե, որոշ կարծրատիպեր կան, որոնք պիտի կոտրել և ստեղծել քո գործունեության միջավայր: Ահա՝ ինչու այստեղ նախատեսել եմ իմ գործունեության պլանը՝ նվազագույնը տասը տարվա կտրվածքով: Ինձ համար հաճելի է այստեղ աշխատելը: Մանավանդ որ քեզանից հետո որևէ բան պիտի թողնես: Եվ արդեն հասցրել եմ բարեկամանալ շատերի հետ:

***Հ. Գ.** Կոմբինատ-համայնք համագործակցությանը մասին խնդրեցինք անդրադառնալ Մեղրի համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանին:*

– Համայնքը և կոմբինատը մի միասնական օրգանիզմ են, – ասաց նա: – Երբ Ալեքսանդր Գրիգորևիչի հետ ծանոթացա, մենք պարզապես շփվում էինք, հետո մեր հարաբերությունները գործնական դարձան: Նրա մեջ տեսա մարդկային բարձր հատկանիշներ, որոնցում արտահայտվել է նրա սերն Ագարակի և Մեղրիի հանդեպ: Առածն ասում է՝ մասնագետ լինելուց առաջ պիտի մարդ լինել: Այդպիսին է նա, նախևառաջ օրինավոր մարդ է: Մեր միջև փոխըմբռնման մթնոլորտ է ստեղծվել: Եթե որևէ խնդրում իրար մերժում ենք, միմյանցից չենք նեղանում: Չեմ թաքցնում՝ երբեմն շահերի բախում է լինում, բայց դա ոչ մի ազդեցություն չի ունենում մեր հարաբերությունների վրա: Ագարակում էլ բոլորը նրան հարգում են, շփվում է բոլորի հետ...

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԵՎ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Ռոման Նավասարդյան. «Առանց ներքին խաղաղության և ազգային համախմբվածության, առանց ազգային ոգու և արժանապատվության վերականգնման չի կարող լինել խաղաղություն»

Սկիզբը՝ էջ 1

կառավարման ոլորտում խարդավանքներն ու սիրողական մոտեցումները մերժող Ռոման Նավասարդյանի կարծիքը՝ մերօրյա ոչ սովորական զարգացումների վերաբերյալ, շարունակում է հետաքրքրել սյունեցիներիս:

Ահա ինչու հունիսի 17-ին այցելեցինք Ողջիի ձորում, Հին Կապանի արևմտյան եզրին, Բաղաց երկնահաս լեռների հայացքի ներքո, բնության հույժ գեղեցիկ վայրում գտնվող նրա առանձնատուն:

Ռոման Շմավոնիչն ու նրա տիկին Իրինա Ստեփանյանը մեր ստեղծագործական խմբին ընդունեցին ամենայն սիրալիրությամբ:

* * *

– Պարոն Նավասարդյան, հաճույքով ենք եկել Ձեզ հետ հանդիպելու և զրուցելու: Իսկ բնության այս անզուգական տեսարանները, թռչունների դայլայլն ավելի են տրամադրում՝ քննարկելու մեզ հետաքրքրող մի քանի հարց:

– Մի՞թե առաջին անգամ եք այցելում մեր տուն, երկուստեք մեղավոր ենք...Բարով եք եկել:

«Սյունյաց երկիրը» և անձամբ Դուք՝ պարոն Ալեքսանյան, շատ փորձությունների միջով եք անցել, բայց կարողացել եք պահպանել սեփական դիմագիծը, կարողացել եք հավատարիմ մնալ ի սկզբանե որդեգրած ճանապարհին, կարողացել եք լինել Սյունյաց աշխարհի նորօրյա և արժանապատիվ տարեգիրը:

– Ռոման Շմավոնի, երբ թերթում ենք Ձեր կենսագրության էջերը՝ ակնհայտ է դառնում, որ մանկության և պատանեկության տարիներից սկսած շատ ակտիվ եք եղել: Իսկ 1996-97-ին, երբ (իբրև Զանգեզուրի կոմբինատի գլխավոր տնօրեն) այցելում էիք նորաստեղծ մարզպետարան՝ դա բոլորիս ուշադրությունն էր գրավում...

Ու երբեմնի ակտիվ Ռոման Նավասարդյանը, կարծեք, մեկուսացել է հանրային կյանքից և գեղեցիկ այս կեցավայրում իր կյանքն է անցկացնում: Ինչպե՞ս հասկանալ:

– Նոր չեմ մեկուսացել, պիտի որ հիշեք՝ կամավոր դիմում գրեցի և հրաժարվեցի Սյունիքի մարզպետի պաշտոնից: Երևի դա առաջին և վերջին դեպքն էր հանրապետությունում, որ մարզպետն ինքնակամ հեռանում է պաշտոնից:

– Իհարկե, հիշում ենք: Մենք միասին մայրաքաղաքում էինք, Սուրեն Աբրահամյանի հրավերով մասնակցում էինք Երևանի տոնակատարությանը: Մարզահամերգային համալիրում պիտի մասնակցեինք հանրապետությունում հավատարմագրված դեսպանների ընդունելությանը:

Միջոցառումը սկսելուց առաջ մենք երկար զրուցեցինք. հավաքվածները սպասում էին Վազգեն Սարգսյանին:

Դուք անկեղծացաք և ասացիք, որ մարզպետի պաշտոնը թողնելու որոշում եք կայացրել:

– Ես ի սկզբանե՝ հարյուր տոկոսով, հավատում էի, որ մեր ազգն ի վիճակի է պետություն և պետականություն ունենալ՝ ամենաարդիական չափանիշներով, բայց...չկարողացանք:

Հավանաբար հիշում եք նաև՝ քանիցս ինձ առաջարկել են հանրապետության արդյունաբերության նախարարի պաշտոնը, հրաժարվել եմ:

Կարծում էին՝ եթե Քաջարանի կոմբինատը ծանր վիճակից հանել ու աշխատեցրել եմ, կարող եմ նաև ամբողջ հանրապետության արդյունաբերությունը բարձրացնել:

Վազգեն Սարգսյանը տնտեսության և հատկապես արդյունաբերության հարցերով ժամանակ առ ժամանակ խորհրդակցում էր ինձ հետ:

Մի անգամ էլ, հիշում եմ, իր մեքենայով գնում էինք պրոֆիլակտորիա: Զրուցում էինք կադրերի ընտրության սկզբունքի մասին: Նա համաձայնեց իմ տեսակետին՝ ցանկացած ղեկավար պետք է ձգտի ամեն մի ճյուղում՝ իբրև պատասխանատու, իրենից խելոք մարդ նշանակել: Եվ եթե ամեն բնագավառում ոլորտը հասկացող, գործը կազմակերպել իմացող մարդ նշանակվի, ապա ամեն ինչ կստացվի: Ղեկավարը չի կարող բոլոր ճյուղերում ամենախելոքը լինել:

– Բայց հոկտեմբերի 27-ի ողբերգությունը տեղի ունեցավ...

– Դրանից առաջ Վազգեն Սարգսյանը եղել էր Միացյալ Նահանգներում, վերադառնալուց հետո հանդիպեցինք:

Ես զեկուցեցի, որ Սյունիքի բոլոր բնակավայրերի հիմնախնդիրները գույքագրել ենք: Եվ այդ հիմնախնդիրները լուծելու ծրագիր ենք մշակել:

Բայց այդ ծրագիրը չէր կարող կյանքի կոչել մարզպետարանը՝ ունեցած գործառույթներով:

Մարզպետարանը (այն ժամանակ, հիմա՝ առավել ևս) աշխատող կառույց չէ:

Ես առաջարկեցի էքսպերիմենտ, որը պետք է սկսեինք Սյունիքից: Եվ առաջինը պետք է նորմալացնեինք մարզպետարանի կարգավիճակը, այսինքն՝ դարձնեինք գործող մարմին:

Ինչո՞ւ Սյունիքից: Մեր մարզում բոլոր հիմքերը կային: Արտահանող մարզ էինք՝ բազմաթիվ ապրանքատեսակներով: Չեմ խոսում հանքարդյունաբերության մասին, որ Սյունիքը եղել ու մնում է Հայաստանի կենտրոնը:

Ու եթե մարզպետարանը վերափոխեինք ու դարձնեինք աշխատող մարմին, ապա մեր առաջարկած ծրագիրը կարող էր կյանքի կոչվել, և հաջողություն կունենայինք:

Վազգեն Սարգսյանը հավանություն տվեց իմ ծրագրին, իմ առաջարկություններին: Եվ որոշեց՝ հունվարի 1-ից մեկնարկ տալ սյունիքյան այդ էքսպերիմենտին:

Եղավ հոկտեմբերի 27-ը, և բոլոր ծրագրերը թաղվեցին...

– Իհարկե, Սյունիքի մարզպետի պաշտոնից կամովին հրաժարվելը մեծ արձագանք գտավ այդ ժամանակ:

Հանրությունը Ձեր այդ որոշումն ընկալեց իբրև Սյունիքի հիմնախնդիրների վրա կառավարության ուշադրությունը հրավիրելու համարձակ քայլ:

Դա էր նաև պատճառը, որ Դուք պաշտոնաթողությունից հետո անգամ շարունակում էիք մեծ հեղինակություն վայելել Սյունիքում, ինչին ականատես եղանք, օրինակ, 2008-ի ընտրությունների ժամանակ:

Մարտի 1-ի դեպքերից հետո Ձեր ձերբակալությունը հանրապետության՝ այդ օրերի ամենաաղմկահարույց դեպքերից էր:

– Մեզ ձերբակալեցին, երբ անցնում էինք Սիսիանի տարածքով:

Տեղի ոստիկանները, բնականաբար, ինձ ճանաչում էին: Եվ ամեն ինչ արեցին, որ չնեղվեմ, չընկճվեմ, անգամ հյուրասիրեցին...

Հետո Կապանի ոստիկանները եկան, որ մեզ մարզկենտրոն տեղափոխեն: Ինձ զարմացրեց կապանցի որոշ ոստիկանների հրճվանքը:

Երեք օր անց ազատ արձակեցին, քանի որ որևէ հիմք չկար մեզ մեղադրանք ներկայացնելու և ազատությունից զրկելու համար:

– Ենթադրում ենք՝ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ մտերմությունն էր պատճառը, որ Ձեզ ձերբակալեցին:

– Ես մտերիմ եմ եղել և՛ առաջին նախագահի, և՛ Ռոբերտ Քոչարյանի, և՛ Սերժ Սարգսյանի հետ: Բոլորի հետ շփվել եմ: Երբեմն ինձ մոտ էին մնում, հանդիպում էինք, զրուցում...

– Ամիսներ հետո՝ 2027 թ. հունվարի 15-ին, լրանում է Ձեր 80-ամյակը:

Տարիների հեռվից, երբ ամփոփում եք անցած ճանապարհը, ո՞րն եք համարում Ձեր կյանքի ամենախոշոր և անմոռանալի դրվագը:

– Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում աշխատելու տարիները, մանավանդ, երբ գլխավոր ինժեներն էի...

– Երբ Դուք Սյունիքի մարզպետ էիք, ինքս էլ մարզպետարանի լրատվության և հանրության հետ կապերի բաժնի ղեկավարն էի: Չնայած ռուսական կրթություն ունեիք և գրական հայերենով երբեմն դժվարությամբ էիք արտահայտվում, բայց միշտ էլ հաճույքով շփվում էիք լրագրողներ հետ:

Մի անգամ էլ համաձայնվեցիք մեր առաջարկությանը՝ մայրաքաղաքային գրեթե բոլոր լրատվամիջոցներից լրագրողներ հրավիրել Սյունիք, թվով 40 լրագրող էին:

Դրանով երիցս ցույց տվեցիք, որ ազատ խոսքի, բազմակարծության ջատագով եք:

– Շատ հետաքրքիր ակցիա էր, թեև, որքան հիշում եմ, ձյունառատ օր էր և լրագրողները Գորիսից Կապան հասան մեծ դժվարությամբ:

Բայց դա չէր կարևորը, այլ այն, որ մենք նման քայլերով փորձում էինք սյունիքյան հիմնախնդիրները հանրայնացնել ու բարձրացնել:

Ինձ համար տարբերություն չկար՝ իշխանական մամուլ, ընդդիմադիր մամուլ... Արդյունքում՝ Սյունիքն ավելի ճանաչելի էինք դարձնում ամբողջ հանրապետությունում:

– Ի՞նչ չեք հասցրել անել, ինչի՞ համար եք ափսոսում, երբ հետադարձ հայացք եք ձգում Ձեր անցած ճանապարհին:

– Ափսոսում եմ, որ չկարողացանք մեր երազած պետականությունը կառուցել:

Ես ֆանատիկ էի, հավատում էի, որ կարող ենք հզոր պետություն և պետականություն ունենալ:

Կոտրվեցի...

Հավատը կորցրինք, իսկ եթե հավատը չկա, մնացածը երկրորդական է:

Իմ մասին չէ, որ մտածում եմ: Մեր ազգի արժանապատվությունն իջեցրել ենք ամենացածր մակարդակի: Իսկ եթե մարդը զրկվում է արժանապատվությունից, ապա, ներող եղեք, հավասարվում է անասունի:

– Որպես քաղաքացի, ինչի՞ց եք վախենում:

– Վախենալու ժամանակն անցել է, ոչ մի բանից չեմ վախենում:

Փոխարենը՝ ափսոսում եմ... Այն, ինչ երազում էինք ազգովի, չիրականացավ, չստացվեց:

– Սյունիքը հայտնվել է բազմաթիվ վտանգավոր սպառնալիքների դեմ հանդիման: Դրանցից մեկը մեր կորսված հողերի ճակատագիրն է, և դրանց վերադարձնելու շուրջ ստեղծված անորոշությունը:

Ինչպե՞ս հետ բերենք Սյունիքից բռնազավթված տարածքները:

– Մենք, ցավոք, դեռևս ցեղի մակարդակի ենք: Մենք պետք է ազգ դառնանք, պետություն և պետականություն ստեղծենք: Մենք պետք է լինենք, որ հետո ձեր բարձրացրած և մյուս հարցերը կարողանանք լուծենք:

Խորհրդային տարիների հայը և այսօրվա հայը հոգեկերտվածքով տարբեր են: Մեզ մանկապարտեզից հայրենասիրությամբ են դաստիարակել, արժանապատվության զգացում ներարկել, իսկ հիմա...

– Խաղաղության մասին են ամենուր խոսում, ընդ որում՝ հանրության մեջ կան խաղաղության տարբեր, նույնիսկ իրարամերժ ընկալումներ:

Ո՞րն է Ռոման Նավասարդյանի պատկերացրած խաղաղությունը:

– Նախ՝ ներսում պիտի խաղաղ լինենք, համերաշխ լինենք...

Առանց ներքին խաղաղության ու ազգային համախմբվածության, առանց ազգային ոգու վերականգնման չի կարող խաղաղություն լինել...

Այսօր բոլոր այդ արժեքները կորցրել են իրենց բնական և նախնական իմաստն ու նշանակությունը:

Հանրության մեջ ձևավորվել է մի խավ, որի ամեն մի ներկայացուցչի տալով պաշտոն կամ գումար՝ ազգային, մարդկային, քրիստոնեական բոլոր արժեքներն անմիջապես կմոռանա:

– Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներն այսօր հայ հանրությանը մտահոգող գլխավոր հարցն է դարձել:

Հասցրե՞լ եք ծանոթանալ ընտրությունների նախապատրաստմանն ու անցկացմանը, հասցրե՞լ եք դատողություններ անել և սեփական կարծիք ձևավորել:

– Խայտառակ, ամոթալի, անարժանապատիվ ընտրություններ էին:

Հանրությունն ընտրությունից հետո հայտնվել է ընկճված վիճակում:

ՀՀ հանքերը ռեկորդներ կսահմանեն, բայց պղնձաձուլարան դեռ չի կառուցվի. մասնագետի վերլուծություն

Պղնձի և մոլիբդենի համաշխարհային պահանջարկն այնքան է աճել, որ անգամ Հորմուզի նեղուցի փակվելը քիչ է ազդում գների վրա: Հայկական հանքավայրերի համար լավ ժամանակներ են, իսկ մետալուրգների համար՝ ոչ այնքան: Ֆերոմոլիբդենի ձուլումը նվազել է, իսկ պղնձաձուլարանի նախագիծը՝ սառեցվել:

2026 թվականին Հայաստանի հանքարդյունաբերությունը կհասնի արտադրության ռեկորդային ծավալների: Sputnik Արմենիայի հետ զրույցում այս մասին ասաց Հայաստանի հանքարդյունաբերության և մետալուրգիայի ասոցիացիայի նախագահ Վարդան Ջհանյանը:

Լոնդոնի մետաղների բորսայի տվյալներով՝ այժմ համաշխարհային շուկայում պղնձի մեկ տոննան 13,5–14 հազար դոլար է, մինչդեռ մեկ տարի առաջ 9,5–10 հազար դոլարի սահմաններում էր: Զգալիորեն թանկացել է նաև մոլիբդենը. եթե մեկ տարի առաջ այն արժեր 47–48 հազար դոլար (մեկ տոննայի դիմաց), ապա հիմա՝ մոտ 68 հազար դոլար:

Գների աճը պայմանավորված է պահանջարկի ավելացմամբ: Պղնձի պարագայում դա կապված է արևային և քամու էներգետիկայի զարգացման, էլեկտրամոբիլների արտադրության և տվյալների մշակման կենտրոնների կառուցման հետ: Մոլիբդենը պահանջված է բարձր ամրության պողպատների արտադրության մեջ, ինչպես նաև արդյունաբերության ավիացիոն, էներգետիկ և այլ ճյուղերում:

Ջհանյանի խոսքով՝ նույնիսկ աշխարհաքաղաքական ռիսկերի պատճառով համաշխարհային արդյունաբերության հնարավոր կարճաժամկետ դանդաղումը, ներառյալ Հորմուզի նեղուցով էներգակիրների մատակարարման հնարավոր խափանումները, չի կարողանա փոխել պղնձի պահանջարկի աճի երկարաժամկետ միտումը:

Ի՞նչ կստանա Հայաստանի բյուջեն

Ջհանյանը նշում է՝ մետաղների բարձր գները հանքարդյունաբերության ոլորտին թույլ կտան առաջիկա մեկ-երկու տարում զգալիորեն ավելացնել հարկային վճարումները:

Լրացուցիչ ներդրում կապահովի Ամուլսարի ոսկու հանքավայրը: «Lydian Armenia» ընկերությունը նախատեսում է արդյունահանումը սկսել արդեն ամռան կեսերին:

Երկրի խոշորագույն հանքարդյունաբերական ձեռնարկությունը՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, նույնպես մտադիր է ընդլայնել արտադրությունը: Առաջիկա երկու տարվա ընթացքում այստեղ ակնկալում են հանքաքարի արդյունահանման ծավալը հասցնել տարեկան մինչև 30 մլն տոննայի: Համեմատության համար նշենք, որ 2026 թվականի համար 22 մլն տոննա է նախատեսված:

Արդյունահանման ծավալների ավելացումը անհրաժեշտ է համաձայնեցնել պետության հետ՝ նաև իրականացնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում:

«Արդյունահանման ծավալների մեծացման պլաններ ունեն նաև Թեղուտի, Ագարակի և մի շարք այլ հանքավայրեր»,- նշեց Ջհանյանը:

Վերջին երկու տարում Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտից հարկային մուտքերը (ներառյալ տեխնիկական և պայթեցման ծառայություններ մատուցող ընկերությունները) գերազանցել են տարեկան 300 մլն դոլարը: Եթե հաշվենք նաև հանքերի համար նախատեսված տեխնիկայի, այդ թվում՝ ինքնաթափերի և բուլդոզերների մատակարարներին, ապա այդ գումարն ավելանում է ևս ավելի քան 20 միլիոնով:

Հայաստանում պղնձաձուլարան բացելու հեռանկարը դեռ անորոշ է

2021 թվականին «GeoProMining» ընկերությունը ձեռք բերեց Զանգեզուրի կոմբինատի բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթը, ինչից հետո կառավարությունը ներդրողի հետ քննարկում էր մաքուր պղնձի ձուլարանի կառուցման նախագիծը: Սակայն հետագայում բանակցությունները դադարեցվեցին:

Ջհանյանի խոսքով՝ ժամանակակից պղնձաձուլական գործարանը համաշխարհային շուկայում մրցունակությունը պահպանելու համար պետք է տարեկան առնվազն 200 հազար տոննա պղինձ արտադրի: Մինչդեռ այսօր Հայաստանում պղնձի հանքաքարի արդյունահանման ծավալը, մաքուր պղնձի վերածած, համարժեք է տարեկան մոտ 80 հազար տոննայի:

Ֆերոմոլիբդեն արտադրողների խնդիրները

Նմանատիպ իրավիճակ է ստեղծվել նաև ֆերոմոլիբդենի արտադրությունում:

1990-ական թվականներից ի վեր Հայաստանում արդյունահանվող մոլիբդենի զգալի մասը վերամշակվում էր Երևանի «Մաքուր երկաթի» և «Armenian Molybdenum Production» գործարաններում: Ավելի ուշ դրանց ավելացան ավելի փոքր արտադրություններ Արմավիրի մարզում և Հրազդանի տարածաշրջանի Ալափարս գյուղում:

Սակայն վերջին տարիներին հայկական ձեռնարկությունները կորցրել են իրենց մրցունակությունը չինական արտադրողների համեմատ, որոնք զգալիորեն ավելի մեծ մասշտաբներով են աշխատում և օգտվում են պետական աջակցությունից:

Այժմ խոշոր ձեռնարկություններից շարունակում է գործել «Մաքուր երկաթի գործարանը», սակայն նրա համար նույնպես դժվար է մրցակցել չինական ընկերությունների հետ:

Զանգեզուրի կոմբինատի արդիականացումը

Մինչ մետալուրգիական ձեռնարկությունները բախվում են դժվարությունների, հանքերն իրենց աճող եկամուտներն ուղղում են արտադրության արդիականացմանը:

Այսպես՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում նախատեսվում է ներդնել հանքային տեխնիկայի պարկի, ինչպես նաև հանքաքարի մշակման ու խտանյութի արտադրման՝ ֆլոտացիոն հոսքագծերի վերահսկման թվային համակարգ:

Հիմա կոմբինատում քննարկում են մի նախագիծ, ըստ որի՝ հանքաքարը պետք է տեղափոխվի բացահանքից դեպի ֆաբրիկա ոչ թե ինքնաթափերով, այլ շարժական կոնվեյերներով: Հաջողության դեպքում դա կօգնի 4-5 անգամ նվազեցնել տեղափոխման ծախսերը:

ARMENIA SPUTNIK

ԵԱԶԲ-ն կաջակցի ԶՊՄԿ-ի արտադրական հզորությունների ընդլայնման ծրագրին

Եվրասիական զարգացման բանկը (ԵԱԶԲ) ֆինանսավորում կտրամադրի՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ արտադրական հզորությունների ընդլայնման ծրագրի իրականացման համար: Համապատասխան վարկային պայմանագիրը ԵԱԶԲ-ի տարեկան ժողովի և Բիզնես ֆորումի շրջանակում ստորագրել են ԵԱԶԲ-ի ավագ գործադիր տնօրեն, նախագծային բլոկի ղեկավար Սերգեյ Իգնատովը և «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի ֆինանսական տնօրեն Նիկոլայ Վեդենինը:

Կնքված պայմանագրի շրջանակում ԵԱԶԲ-ն ԶՊՄԿ-ի համար տրամադրում է 120 մլն ԱՄՆ դոլարի չափով չվերականգնվող վարկային գիծ: Ներգրավված միջոցները կուղղվեն ընկերության ներդրումային ծրագրի իրականացմանը, որը նախատեսում է հանքաքարի վերամշակման ծավալների ավելացում՝ որպես ձեռնարկության զարգացման երկարաժամկետ ծրագրի մաս:

«Ֆինանսավորումը կուղղվի արտադրական ցիկլի արդյունավետության բարձրացման ծրագրի իրականացմանը: Սա արտացոլում է ԵԱԶԲ-ի գործունեության կարևոր ուղղություններից մեկը՝ մասնակցությունը տարածաշրջանում արդյունաբերության արդիականացման երկարաժամկետ ֆինանսավորմանը՝ հենվելով առկա արդյունաբերական ներուժի վրա», – նշել է ԵԱԶԲ-ի ավագ կառավարող տնօրեն, նախագծային բլոկի ղեկավար Սերգեյ Իգնատովը:

«Ներգրավված ֆինանսավորումը մեզ հնարավորություն կտա հետևողականորեն իրականացնել ներդրումային ծրագիրը, որի նպատակն է ավելացնել հանքաքարի վերամշակման ծավալները: Սա կարևոր քայլ արդյունավետության բարձրացման, տեխնիկական վերազինման և արտադրության երկարաժամկետ կայուն զարգացման ապահովման ճանապարհին», – նշել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ ֆինանսական տնօրեն՝ Նիկոլայ Վեդենինը: //

Moody's-ը վերահաստատել է ԶՊՄԿ-ի B2 վարկանիշը՝ կայուն կանխատեսմամբ

Վարկանշային գործակալությունն ավարտել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի (ԶՊՄԿ) վարկանիշների հերթական պարբերական գնահատումը՝ վերահաստատելով ընկերության B2 Corporate Family Rating վարկանիշը՝ կայուն կանխատեսմամբ: Գնահատման ընթացքում Moody's-ը նշել է ԶՊՄԿ-ի կարևոր նշանակությունը Հայաստանի տնտեսության համար, ընկերության մրցունակ ծախսային դիրքը, կայուն ֆինանսական ցուցանիշները և ֆինանսավորման աղբյուրների հասանելիությունը:

Վարկանիշի և կայուն կանխատեսման վերահաստատումը հանդիսանում է ընկերության ֆինանսական պրոֆիլի կայունության, գործառնական արդյունավետության և երկարաժամկետ ներդրումային ծրագրերն իրականացնելու կարողության անկախ հաստատում: ԶՊՄԿ-ն շարունակելու է իր ռազմավարական նախաձեռնությունների իրականացումը՝ ուղղված գործառնական արդյունավետության բարձրացմանը, մրցակցային դիրքերի ամրապնդմանը և բոլոր շահակիցների համար երկարաժամկետ ու կայուն արժեքի ստեղծմանը: //

Չգիտեմ նույնիսկ՝ կկարողանա՞ մեր հանրությունը դուրս գալ այդ վիճակից:

– Կյանքում ովքե՞ր են եղել ընդօրինակման արժանի կերպարներ Ձեզ համար, որոնց ցանկացել եք նմանվել, որոնց վարքն ու ապրելակերպը Ձեզ համար օրինակ են եղել:

– Նախևառաջ հայրս ու մայրս են եղել այն կերպարները, ովքեր ինձ ներարկել են պետականության, հայրենասիրության, աշխատասիրության զգացումներ...

– Որքան Ձեզ ճանաչում ենք, Դուք չեք կարող ծրագրեր չունենալ, թեև կյանքի 80-րդ տարում եք:

– Ամենամեծ մտահոգությունս այն է, թե ինչպես պիտի ապրեն մեր երեխաները, մեր հաջորդները:

Նախկինում հասկանում էի՝ ճիշտը սա է, սխալը՝ սա: Հիմա ամեն ինչ խառնվել է, չգիտեմ՝ ի՞նչ խորհուրդներ տալ թոռնիկներիս, ի՞նչ ուղղությամբ տանել նրանց դաստիարակությունը:

Նայեք աշխարհի վիճակին, նայեք ամենահզոր պետությունների ղեկավարներին, Եվրոպայի առաջնորդներին՝ շատերը սովորական ծաղրածուներ են:

– Ինչպե՞ս պատահեց, որ բնակարան կառուցեցիք հենց այս գեղեցիկ վայրում:

– Կապանում մեր տունը մշակույթի պալատի մոտ էր, Վաչագան գետի աղմուկը միշտ կար...

Գառնիկ Մեխակիչը Համլետավանում մեզ հարմար տեղ էր առաջարկում՝ բնակարան կառուցելու համար: Տիկինս էլ սիրում էր այգու գործերը և ուզում էր, որ անպայման առանձնատուն ունենանք: Սակայն, զբաղվածության պատճառով, տևական ժամանակ այդպես էլ չկարողացանք ծանոթանալ այդ հողատարածքին:

Օրերից մի օր՝ պատահական, տղաներով, եկանք այստեղ՝ Ողջիի գետափ: Ընդ որում՝ ճանապարհ չկար, քարեր էին և միայն քարեր... Տեղանքն ինձ շատ դուր եկավ: Հետո կնոջս ծանոթացրի տեղանքին, ինքն էլ հավանեց: Եվ կառուցեցինք այս տունը:

Հիմա էլ Ողջի գետի աղմուկն է միշտ ուղեկցում մեզ, ինչպես Վաչագանը՝ նախկինում:

Բայց այս տունն ու տնամերձն ավելի են գեղեցկանում, երբ թոռնիկներս այցելում են մեզ:

– Ասում են՝ կրտսեր եղբայրդ՝ Ռոբերտ Նավասարդյանը, ժամանակին օգնել է Ձեզ, երբ փորձում էիք տևական դադարից հետո վերականգնել Քաջարանի կոմբինատի աշխատանքները: Ու այդ մասին համեստաբար լռում եք:

– Սվերդլովսկում հանքարդյունաբերական խոշոր միավորման գլխավոր տնօրեն էր, 37 ձեռնարկություն էր մտնում այդ միավորման մեջ: Եվ ինքը հնարավոր ամեն ինչ արեց՝ մեզ օգնելու առումով, որ Քաջարանի կոմբինատի աշխատանքները վերականգնվեն ու բնականոն հուն մտնեն:

– Ռոման Շմավոնի, շնորհակալություն հետաքրքիր զրույցի համար: Ձեզ՝ քաջառողջություն: Իսկ Սյունիքի վերաբերյալ, մեր արժեհամակարգի վերաբերյալ Ձեր մտածումները մեզ համար եղել և մնում են հետաքրքիր:

Ուզում եմ, որ մեզանից անպակաս լինեք:

– Ես եմ շնորհակալ, «Սյունյաց երկրին» և մեր սիրելի պարբերականի ամբողջ խմբագրակազմին՝ հաջողություններ:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ՄԱՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ

Որտեղի՞ց հայտնվեց «300 հազար ադրբեջանցիների վերադարձի» թեզը, և ի՞նչ են ցույց տալիս պաշտոնական թվերը

Սկիզբը՝ էջ 1

կանությունը՝ ներառյալ Արցախը, դրանից 2 ամիս անց՝ 2022-ի դեկտեմբերին, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը «Արևմտյան Ադրբեջանի համայնք» կոչվող կազմակերպության հետ հանդիպմանը հայտարարեց. «Այժմ, երբ Ղարաբաղյան հակամարտությունը լուծվել է, սա է մեր օրակարգում եղած խնդիրը: Իհարկե, վաղաժամ էր խոսել դրա մասին նախքան Ղարաբաղյան հակամարտության լուծումը: Բայց մենք չպետք է ժամանակ վատնենք: Պետք է մշակվի վերադարձի հայեցակարգ: Կրկին, այն պետք է լինի խաղաղ հայեցակարգ»:

Այսինքն՝ կեղծ են Փաշինյանի և նրա թիմի բոլոր այն պնդումները, թե ադրբեջանցիները «վերադարձի» թեման առաջ են քաշում ի պատասխան արցախահայության վերադարձի իրավունքի մասին հայտարարությունների: Իրականում պաշտոնական Բաքվի պատվերով այս խոսույթը սկսել է ակտիվորեն շրջանառվել 2022-ից՝ այն բանից հետո, երբ Փաշինյանն Արցախը ճանաչել է Ադրբեջանի մաս, այլ կերպ ասած՝ դեռ այն ժամանակ, երբ Արցախի տարածքը հայաթափված չէր և, թեկուզ մասամբ, հայկական վերահսկողության տակ էր:

Վերջերս՝ 2026 թվականի հունիսի 22-ին, «Արևմտյան Ադրբեջանի ժառանգությունը. վերադարձ պատմական արմատներին» խորագրով մի միջոցառում տեղի ունեցավ Ադրբեջանի Գյոյգյոլի շրջանում, որտեղ Հայաստանի տարածքը ներկայացվում էր որպես «Արևմտյան Ադրբեջան», ելույթներում էլ հնչում էին Հայաստանի տարածք ադրբեջանցիների վերադարձի և հետագայում նման միջոցառումները Հայաստանի տարածքում անցկացնելու մասին հայտարարություններ:

«Վերադարձ Արևմտյան Ադրբեջան» անվամբ մի միջոցառում-ցուցահանդես էլ տեղի է ունեցել 2026 թ. հունիսի 18-19-ին Նախիջևանի Օրդուբադ քաղաքում:

Նման մի միջոցառում էլ հունիսի 24-ին կայացել է Վաշինգտոնում՝ ԱՄՆ Կոնգրեսում, խորագիրը՝ «Վերադարձի իրավունք և ինքնորոշում. կրկնակի չափանիշներ և ընտրողական մոտեցումներ»:

Այսպիսով՝ 300.000 ադրբեջանցիների Հայաստան գալու թեզն առաջին անգամ շրջանառել է Իլհամ Ալիևը: Որքան էլ Փաշինյանն ու նրա թիմը հայտարարեն, որ դա «ֆեյք, մտացածին, հորինովի թեմա է, նման բան չի եղել, չկա և չի լինելու», ինչպես նաև «խաղաղությունը բոլոր այդ թեմաները փակում է և փակել է», Ադրբեջանը պետական մակարդակով հսկայական ռեսուրսներ է հատկացնում զավթողական այդ օրակարգի առաջմղմանը, այդ թվում՝ արտերկրում՝ այն համարելով իր առաջնահերթություններից մեկը:

Որքա՞ն ադրբեջանցի է ապրել Խորհրդային Հայաստանում

Մինչև Ղարաբաղյան առաջին պատերազմը, ինչպես որ հայեր են ապրել Ադրբեջանի տարածքում, այնպես էլ ադրբեջանցիներ են բնակվել Հայաստանի տարածքում:

Բնակչության վերաբերյալ պաշտոնական տվյալները ստացվում են մարդահամարներից: Խորհրդային Հայաստանում մարդահամար անցկացվել է 1926, 1939, 1959, 1970, 1979 և 1989 թթ.: Ալիևը հարցազրույցի ընթացքում նշել է հստակ ժամանակահատված (1980-ականների վերջ և 1990-ականների սկիզբ):

Ըստ 1979 թ. մարդահամարի տվյալների՝ Խորհրդային Հայաստանում ապրել է 3.037.259 մարդ, որոնց ճնշող մեծամասնությունը եղել են հայեր՝ 2.724.975 մարդ կամ 89,7 տոկոսը: Երկրորդը եղել են ադրբեջանցիները՝ 160.841 մարդ կամ 5,3 տոկոսը, իսկ երրորդ տեղում՝ ռուսները՝ 70.336 մարդ կամ 2,3 տոկոսը:

1989 թ. մարդահամարի համաձայն՝ ՀԽՍՀ բնակչությունը կազմել է 3.304.776 մարդ, որոնցից հայերը՝ 3.083.616 մարդ կամ 93,3 տոկոսը, ադրբեջանցիները՝ 84.860 մարդ կամ 2,6 տոկոսը, իսկ երրորդը եղել են քրդերը (ներառված են եզդիները)՝ 56.127 մարդ կամ 1,7 տոկոսը:

Սրանք խորհրդային մարդահամարի պաշտոնական տվյալներ են, ինչը նշանակում է, որ 1980-ականների վերջում Հայաստանում ապրող ադրբեջանցիների թիվը նույնիսկ 100 հազարի չի հասել: Ընդ որում՝ 1979-ին արձանագրված թիվը (160.841 մարդ) խորհրդային շրջանում անցկացված բոլոր մարդահամարների մեջ եղել է հայաստանաբնակ ադրբեջանցիների ամենամեծ ցուցանիշը, բայց, ինչպես տեսնում ենք, մոտ 2 անգամ փոքր է Ալիևի հայտարարած թվից:

1979-ի համեմատ 1989-ին Հայաստանում ադրբեջանցի բնակչության թվի կտրուկ անկումը պայմանավորված է 1980-ականների վերջին հայ-ադրբեջանական հարաբերությունների կտրուկ սրմամբ, 1988-ի փետրվարին սկսված Արցախյան շարժմամբ ու դրան հաջորդած հայ-ադրբեջանական հակամարտությամբ:

Ահա ադրբեջանցիների թվաքանակը Հայաստանում 1926-1989 թթ.:



1926 թ.-ի մարդահամարի տվյալներով՝ ադրբեջանցիները հիշատակվում են որպես «թյուրքեր»

Այսպիսով՝ Ալիևի կողմից շրջանառված «300.000 հազար ադրբեջանցիների» թեզը կեղծ է և չի համապատասխանում իրականությանը:

Իսկ որքա՞ն հայ է բնակվել Խորհրդային Ադրբեջանում

Խորհրդային տարիներին անցկացված մարդահամարներն արձանագրել են նաև Խորհրդային Ադրբեջանում ապրած հայերի թիվը:

Պաշտոնական տվյալները փաստում են՝ խորհրդային տարիներին Ադրբեջանական ԽՍՀ-ում ապրել է բավականին մեծաթիվ հայկական համայնք: Հարկ է նշել, որ անցկացված մարդահամարների ժամանակ Խորհրդային Ադրբեջանի վերահսկողության տակ էր նաև Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ), հետևաբար վիճակագրական տվյալներում ներառված են նաև այնտեղ ապրող հայերը:

Այսպես, ըստ 1959 թ. մարդահամարի պաշտոնական տվյալների՝ Ադրբեջանական ԽՍՀ-ում ընդհանուր 3.697.717 բնակիչ կար, որոնցից հայերի թիվը կազմել է 442.089 մարդ կամ 12 տոկոսը:

Արդեն 1970 թվականին անցկացված հաջորդ մարդահամարի ժամանակ Ադրբեջանի բնակչությունը հասել էր 5.117.081-ի: Այդ տարի հայերի բացարձակ թիվը նույնպես աճել էր՝ հասնելով խորհրդային շրջանի իր առավելագույն ցուցանիշին՝ 483.520 մարդ կամ 9,4 տոկոսը:

Հաջորդ՝ 1979 թ. մարդահամարի տվյալներով Ադրբեջանական ԽՍՀ-ում ապրում էր 6.026.515 մարդ: Հայերի թվաքանակը եղել է 475.486 մարդ, ինչը երկրի բնակչության 7,9 տոկոսն էր: Ընդ որում՝ 1979-ին հայերը դարձել են Խորհրդային Ադրբեջանի ամենամեծ ազգային փոքրամասնությունը՝ առաջ անցնելով ռուսներից (նման պատկեր եղել է նաև 1926-ին):

Իրավիճակը փոխվել է 1980-ականների վերջին: 1989 թ. անցկացված խորհրդային վերջին մարդահամարի տվյալներով՝ Ադրբեջանի բնակչությունը կազմել է 7.021.178 մարդ, որոնցից հայ էին 390.505-ը կամ 5,6 տոկոսը: Այս ցուցանիշը նախորդ մարդահամարի համեմատ արձանագրում էր հայ բնակչության զգալի անկում, ինչն անմիջականորեն պայմանավորված էր Արցախյան շարժման մեկնարկով ու դրան հաջորդված միջէթնիկական բախումներով, Ադրբեջանի տարածքում, մասնավորապես՝ Սումգայիթում ու Կիրովաբադում, հայերի հանդեպ իրականացված ջարդերով, ինչպես նաև, ընդհանուր առմամբ, հայ-ադրբեջանական հարաբերությունների սրմամբ:

Ահա հայերի թվաքանակը Խորհրդային Ադրբեջանում (ներառյալ՝ Արցախում) 1926-1989 թթ.:

Մարդահամարի տվյալներն արձանագրում են, որ կես դար շարունակ՝ 1939-1989 թթ., Խորհրդային Ադրբեջանի տարածքում հայերի թիվը կայուն է եղել՝ տատանվելով 390-490 հազարի շրջանակներում:

Չի բացառվում, որ ադրբեջանական քարոզչամեքենան ուռճացնում է Հայաստանի տարածքում ապրած ադրբեջանցիների թիվը՝ փորձելով այն համեմատության մեջ դնել Խորհրդային Ադրբեջանի հայ բնակչության թվաքանակի հետ:

Ինչ վերաբերում է «վերադարձի իրավունքին», ապա սա այլ թեմա է՝ հաշվի առնելով, թե ինչպես են ադրբեջանցիները կամ նրանց զգալի մասը հեռացել Հայաստանից՝ իրենց տները փոխանակելով Ադրբեջանից գաղթող հայերի մի մասի տների հետ՝ ի տարբերություն Սումգայիթի, Կիրովաբադի, Բաքվի ջարդերից հետո մազապուրծ եղած հայերի կամ 2020-2023 թթ. Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմների հետևանքով իրենց գույքը կորցրած ու փախստական դարձած հայերի:

HETQ.AM

Կապանի համայնքապետարանի վարչական շենքը և մերձակա պուրակը՝ նոր տեսքով

Հունիսի 30-ը տոնական հնչերանգներով բացվեց մարզկենտրոն Կապանում: Տեղի ունեցավ մի իրադարձություն, որին քաղաքի բնակիչները, անպատճառ, սպասում էին՝ Կապանի համայնքապետարանի վերակառուցված վարչական շենքի, նորակառույց մասնաշենքի և համայնքապետարանի առջևի նորացված պուրակի բացման արարողությանը:

Փողային նվագախումբը տոնական մեղեդիներ էր հնչեցնում: Մարդիկ շնորհավորում էին միմյանց՝ իրադարձության առթիվ: Մանավանդ աչք էր շոյում նորացված պուրակը, որ այսուհետ կապանցիների զբոսանքների և հանդիպումների սպասված վայր պիտի դառնա:

Հանդիսությանը մասնակցում էին Սյունյաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Մակար եպիսկոպոս Հակոբյանը, հոգևոր հայրեր, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյանը, ընկերության կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանը, Կապանի լեռնահարստացման կոմբինատի գլխավոր տնօրեն Դավիթ Դանիելյանը, Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամինը, պաշտոնատար այլ անձինք, հասարակական-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներ, Կապանի հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչներ, հյուրեր:

Գեղեցիկ շատրվանի գործարկմամբ բացվեց նորոգ պուրակը, որի պատիվը տրվեց հանգստյան այդ գոտու մշտական այցելուներից ավագ սերնդի ներկայացուցիչներին:

Ծրագիրը կյանքի է կոչվել ամբողջովին համայնքային բյուջեի հաշվին, այն կազմել է մոտ 138 մլն դրամ: Շինարարական աշխատանքներն իրականացրել է «Նորոգշին» ՍՊ ընկերությունը, տեխնիկական հսկողությունն կատարել է «Էներջի ֆակտորի» ՍՊ ընկերությունը և նախագծի հեղինակը «Ռազբիլդինգ» ՍՊ ընկերությունն է:

Հաջորդիվ տեղի ունեցավ վերակառուցված վարչական շենքի և նորակառույց մասնաշենքի պաշտոնական բացման արարողությունը:

Օրվան պատշաճող խոսքեր հնչեցրեց Սյունյաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Մակար եպիսկոպոս Հակոբյանը. **«Համոզմունք ունեմ, որ նորակառույց այս մասնաշենքում համայնքապետն ու իր աշխատակազմն ամեն օր ջանք ու եռանդ կներդնեն, որ այս մեծ համայնքն իսկապես դառնա օջախ: Եվ օրհնում եմ, որ մեր երկնակամարը միշտ լինի կապույտ, երկինքը՝ միշտ խաղաղ, մանուկները մեծանան ու դառնան մեր երկրի արժանի զավակներ: Ովքեր ապրում են այս համայնքում, թող լինեն ստեղծարար, շեն և առողջ, շնորհակալություն նրանց, ովքեր իրենց նպաստն են բերում համայնքի զարգացմանը: Եթե մարդ մեկ քար ավելացնում է համայնքի շենացման պատին, թող Աստված օրհնի ու հարյուրապատիկ հատուցում տա»:**

2003-2008 թթ. Կապանի քաղաքապետ Արմեն Կարապետյանն իր խոսքում նշեց, որ համայնքապետարանի շենքի կառուցումը և նորոգումն անհրաժեշտություն էին դարձել դեռևս 2000 թվականից, քանզի չէին ապահովվում աշխատելու բարեհարմար պայմաններ: Այժմ, երբ այդ ամենն իրականություն է դարձել, համայնքապետարան դիմող քաղաքացիների և նրա աշխատակիցների միջև փոխադարձ վստահության մթնոլորտ կստեղծվի:

Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը բարեմաղթանքի իր խոսքում այն միտքն ընդգծեց, որ համայնքապետարանի վերակառուցումն ու նորոգումն անհրաժեշտ էին այնքանով, որ այդ շենքը կարևոր դեր ու նշանակություն ունի կապանցիների կյանքում, այդտեղ են կայացրել Կապան քաղաքի համար պատմական որոշումներ, կերտել քաղաքի վերջին 70 տարվա պատմությունը:

Պաշտոնական արարողությունից հետո հանդիսության մասնակիցները շրջայց կատարեցին նոր վարչական շենքում, ծանոթացան վերակառուցված և ամբողջությամբ կահավորված հարկաբաժիններին, որոնք համայնքապետարանի աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու և քաղաքացիների սպասարկման որակի բարելավման նպաստավոր պայմաններ են ստեղծել:

Համայնքապետարանի հին մասնաշենքը կառուցվել է 1954-1955 թթ.-ին՝ որպես Ղափանի կուսշրջկոմի վարչական շենք: Տասնամյակներ շարունակ եղել է բազում հասարակական-քաղաքական իրադարձությունների վկան: Այդ շենքում են գործունեություն ծավալել Ղափանի կուսշրջկոմի առաջին քարտուղարներ Ասատուր Մանասարյանը, Մուշեղ Համբարձումյանը, Արշավիր Գասպարյանը, Վազգեն Հարությունյանը, Ռաֆայել Մինասյանը, Այլոշա Հակոբյանը, Ռոլանդ Ղոնյանը, Կարեն Մկրտչյանը և այլ նվիրյալ ղեկավարներ, որոնց անուններն անքակտելիորեն միահյուսված են Կապանի պատմությանը:

Հայաստանի անկախության առաջին տարիներին՝ 1992-94 թթ., շենքը ծառայել է որպես զինվորական կոմիսարիատի նստավայր: 1995 թվականին Հայաստանի վարչատարածքային բարեփոխումներից հետո՝ շենքը սկսեց ծառայել համայնքային իշխանությանը: Այդ ժամանակաշրջանից ի վեր համայնքը ղեկավարել են Գագիկ Աթաջանյանը, Արմեն Կարապետյանը, Արթուր Աթայանը, Աշոտ Հայրապետյանը, իսկ 2018 թվականից մինչ այսօր՝ Գևորգ Փարսյանը:

Համայնքապետարանի շենքի վերանորոգումն իրականացվել է սուբվենցիոն ծրագրով՝ համայնք-կառավարություն համագործակցության շրջանակում՝ ծրագրի ընդհանուր արժեքը մոտ 911 միլիոն դրամ է: Մասնաշենքի կահավորումն ու վերազինումն իրականացվել են Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ֆինանսավորմամբ:

Վարչական մասնաշենքի շինարարությունն իրականացրել է «Նորոգշին» ՍՊ ընկերությունը, նախագծող՝ «Սթեմ» ՍՊ ընկերություն, տեխնիկական հսկողությունն իրականացրել է «ԳարԳաս» ՍՊ ընկերությունը:

Համայնքապետարանի առջևի պուրակում հյուրասիրություն էր կազմակերպվել: Ներկաները մի բաժակ շամպայնով և բարեմաղթանքի խոսքերով շնորհավորեցին միմյանց՝ հաջողություններ մաղթելով:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Ադրբեջանը հաստատել է Նախիջևանի Սահմանադրության փոփոխությունները. հանվել են Մոսկվայի և Կարսի պայմանագրերի անվանումները

Փոփոխությունների համաձայն՝ Սահմանադրության նախաբանից հանվել են 1921 թվականի մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրի և 1921 թվականի հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրի անվանումները:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հաստատել է Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Սահմանադրության փոփոխությունները, որոնցով հանվել են 1921 թվականի Մոսկվայի և Կարսի պայմանագրերի հիշատակումները: Այս մասին հայտնում են ադրբեջանական լրատվամիջոցները:

Փոփոխությունների համաձայն՝ Սահմանադրության նախաբանից հանվել են 1921 թվականի մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրի և 1921 թվականի հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրի անվանումները:

Սահմանադրությունում ներառվել է նոր՝ 3-1 հոդված, որով սահմանվում է, որ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում Ադրբեջանի նախագահի լիազոր ներկայացուցչությունը հանդիսանում է գործադիր մարմին և իրականացնում է նախագահի կողմից սահմանվող խնդիրները: Լիազոր ներկայացուցիչը նշանակվում և ազատվում է Ադրբեջանի նախագահի կողմից և անմիջականորեն ենթարկվում է նրան:

Նոր՝ 28-1 հոդվածով սահմանվում են նաև Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Գերագույն Մեջլիսի արձակման հիմքերը: Ըստ փոփոխության՝ այն կարող է արձակվել 31 պատգամավորի պահանջով կամ այն դեպքում, երբ Գերագույն Մեջլիսը չի կարողանում իրականացնել իր լիազորությունները:

Սերգեյ Մարկեդոնով. «Ադրբեջանն ազատվում է «կրտսեր եղբոր» կարգավիճակից»

2026 թվականի մարտի 10-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հաստատեց Նախիջևանի Ինքնավար Հանրապետության սահմանադրության փոփոխությունները, որոնցով դրանից հեռացվել են հղումները 1921 թվականի Մոսկվայի և Կարսի պայմանագրերին:

Փոփոխությունների մասին զրուցել ենք ռուսաստանցի քաղաքագետ, «Միջազգային վերլուծություն» ամսագրի գլխավոր խմբագիր Սերգեյ Մարկեդոնովի հետ:

– Կարելի՞ է մեկնաբանություններ տեսնել այն մասին, թե Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելուց և դրանից 1921 թվականի Մոսկվայի և Կարսի պայմանագրերին հղումները հանելուց հետո «Ռուսաստանն ու Թուրքիան դադարում են լինել Նախիջևանի երաշխավորները»: Արդյո՞ք նրանք այդպիսիք հանդիսացել են:

– Ես կիսում եմ այն քաղաքագետների և իրավաբանների հայացքները, ովքեր Սահմանադրությունները չեն դիտարկում որպես բացառապես ֆորմալ-իրավական երևույթ: Մասնավորապես, գերմանացի իրավագետ Ֆերդինանդ Լասալը խոսում էր փաստացի և ֆորմալ Սահմանադրությունների մասին, իսկ ժամանակակից ամերիկացի իրավագետ Սթիվեն Հոլմսը նշում է, որ Սահմանադրությունը զուտ իրավական ակտ չէ, այլ սոցիալ-քաղաքական ուժերի որոշակի հավասարակշռության արտացոլում:

Մեկնաբանություններն այն մասին, որ Թուրքիան և Ռուսաստանը դադարում են լինել Նախիջևանի երաշխավորները, իսկապես, հաճախ են հանդիպում: Թերևս այս թեզի ամենածավալուն հիմնավորումը հնչել էր 1990-ականների սկզբի հայ-ադրբեջանական կարգավորման պլաններից մեկի հեղինակ Փոլ Գոբլի վերջերս հրապարակված մեկնաբանության մեջ: 77 տարեկանում նա դեռևս ցանկանում է ամենագետ վիզիոների դերում հանդես գալ, թեև հանդես է գալիս պարզունակ ընդհանրացումներով: Օրինակ՝ գերագնահատում է Իոսիֆ Ստալինի դերը 1921 թվականի իրադարձություններում: Այն ժամանակ Ստալինը դեռևս խորհրդային քաղաքականության «գլխավոր ճարտարապետը» չէր:

1921 թվականին քեմալական Թուրքիան և ՌՍՖՍՀ-ն (Խորհրդային Միությունը կստեղծվի միայն 1922 թվականի դեկտեմբերին) ստորագրեցին Մոսկվայի և Կարսի պայմանագրերը: Ի դեպ, ուշադրություն դարձրեք, որ Նախիջևանի կարգավիճակը փոփոխվում է Մոսկվայի փաստաթղթի հոբելյանին ընդառաջ. այն ստորագրվել էր 105 տարի առաջ՝ 1921 թվականի մարտի 16-ին:

Քեմալական կառավարությունը գոյություն ուներ, սակայն սուլթանը դեռ Ստամբուլում էր՝ Վահդեթթին նստավայրում: Հեռավոր Արևելքում շարունակվում էր քաղաքացիական պատերազմը, Ռուսաստանով մեկ բռնկվել էին գյուղացիական ապստամբություններ: Այսինքն՝ երկու երկրներն էլ այն ժամանակ գտնվում էին «ինքնահաստատման» գործընթացում: Եվ այս պայմաններում նրանք Կովկասում որոշակի ստատուս քվո ֆիքսեցին: Եթե դիտարկենք պայմանագրի երրորդ կետը, ապա այն խոսում է Ադրբեջանի պրոտեկտորատի ներքո Նախիջևանի ինքնավար գոյության մասին: Եվ վճռորոշն այն է, որ Ադրբեջանն այդ պրոտեկտորատը չի կարող փոխանցել որևէ երրորդ կողմի: Ըստ էության, նա ոչ մեկին չի էլ փոխանցում: Հենց այդ պատճառով չարժե խոսել Ռուսաստանի և Թուրքիայի որոշակի երաշխավորչական գործառույթների դադարեցման մասին:

ԽՍՀՄ-ի ստեղծումը շատ բան փոխեց: Թուրքիան Կովկասում լուրջ խաղացող դարձավ ԽՍՀՄ փլուզումից հետո. տեղի ունեցավ որոշակի վերադարձ, կարելի է ասել, «հին նորմալությանը»:

Իմ կարծիքով, այսօր ավելի կարևոր է հարցը դիտարկել ոչ թե Մոսկվայի և Կարսի պայմանագրերի լույսի ներքո, այլ այն տրանսֆորմացիաների համատեքստում, որոնք տեղի են ունեցել Ադրբեջանում:

– Եթե հարցին նայենք ավելի լայն համատեքստում. արդյո՞ք այսօրվա աշխարհում, որտեղ միջազգային իրավունքը փաստացիորեն դադարել է գոյություն ունենալ, իմաստ ունի՞ լուրջ նշանակություն տալ նրան, ինչ գրվել է 105 տարի առաջ ստորագրված Մոսկվայի և Կարսի պայմանագրերում:

– Կրկնեմ՝ սա սոսկ «իրավական ֆետիշիզմի» հարց չէ: Սա քաղաքական հարց է: Եթե քաղաքական նպատակահարմարություն առաջանա, այս պայմանագրերը կհիշեն, և նույնիսկ կփորձեն դրանց նոր իրավական փայլ և հավելյալ լեգիտիմություն հաղորդել:

Ես համաձայն չեմ այն մտքի հետ, թե միջազգային իրավունքն ընդհանրապես դադարել է գոյություն ունենալ: Ավելի շուտ կարելի է ասել, որ այն գոյություն չունի այն տեսքով, որը հաստատվել էր Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքներով՝ Յալթա-Պոտսդամյան համակարգի շրջանակներում:

Իմ տեսանկյունից՝ Հարավային Կովկասում «գետնի վրա» տեղի ունեցող փոփոխությունները հիմնված են ոչ թե Մոսկվայի և Կարսի պայմանագրերի կետերի, այլ ուրիշ իրողությունների վրա: Ժամանակակից Թուրքիան զգալիորեն տարբերվում է այն հանրապետությունից, որը փորձում էր խզել իր կապը օսմանյան ժառանգության հետ և աշխարհիկ պետություն կառուցել: Մենք տեսնում ենք, որ Թուրքիայի Հանրապետության շատ առանցքային գաղափարախոսություններ, որոնք ձևավորվել են նախորդ դարի քսանականների սկզբին, ենթարկվում են վերաիմաստավորման, և դա կապված է նաև Կովկասում կամ Մերձավոր Արևելքում տիրող իրավիճակի հետ: Սակայն թուրքերը դա անում են ամենևին ոչ այն պատճառով, որ հենվում են Մոսկվայի և Կարսի պայմանագրերի հոդվածների կետերի վրա կամ փորձում են դրանք ինչ-որ կերպ արդիականացնել:

Նրանք դա անում են, որովհետև Թուրքիան հզորացել է թե տնտեսապես, թե ռազմական առումով: Թուրքիայի ղեկավարությունը փորձում է վերաիմաստավորել իր դերը աշխարհում: Առկա է Ռեջեփ Թայիփ Էրդողանի հայեցակարգն այն մասին, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ պետք է լինեն ոչ թե 5 երկիր, այլ ավելին:

Թուրքերը փորձում են դուրս գալ Միացյալ Նահանգների և ՆԱՏՕ-ի չափազանցված խնամակալությունից, բայց երբ ձեռնտու է՝ հիշում են ՆԱՏՕ-ի մասին: Հիշեցին, օրինակ, Սիրիայում տեղի ունեցած միջադեպի և 2015-ին Ռուսաստանի հետ հարաբերությունների սառեցման ժամանակ կամ հիմա՝ իրանական ճգնաժամի լույսի ներքո: Սակայն սա արդիական օրակարգ է, այլ ոչ թե վերադարձ նրան, ինչ եղել էր 105 տարի առաջ:

– Կարելի՞ է ասել, որ Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված էր «վաշինգտոնյան պայմանավորվածություններով»:

– Ո՛չ: Այս բարեփոխումը նախանշվել էր 2025 թվականի հուլիսին, երբ սկսվեցին քննարկումները Ադրբեջանի խորհրդարանում: Դա տեղի էր ունեցել Վաշինգտոնի գագաթնաժողովից մոտ մեկ ամիս առաջ:

Իմ կարծիքով, այս գործընթացն իր ներքին տրամաբանությունը ունի, որը կապված չէ TRIPP-ի հետ: Եվ այն բազմաշերտ է: Հետխորհրդային հակամարտությունների հայտնի հետազոտող Բրունո Կոպիտերսի կարծիքով՝ Նախիջևանի մոդելը դիտարկվում էր որպես «պատերն» Լեռնային Ղարաբաղի համար: Այլապես դժվար է հասկանալ էթնիկապես չտարբերվող բնակչություն ունեցող ինքնավարության գոյության իմաստը ունիտար պետության շրջանակներում, չէ՞ որ ինքնավարությունը ֆեդերալիզմ չի նշանակում:

Ադրբեջանը միշտ է փորձել հեռու մնալ ֆեդերալիզմի գաղափարից: Եվ այդ պատճառով Նախիջևանը յուրօրինակ «առաջարկ» էր: Պայմանականորեն ասած՝ եթե հանկարծ Ղարաբաղը համաձայներ վերադառնալ Ադրբեջանի կազմ, կարելի էր ասել. «տեսեք, մենք նաև այլ ինքնավարություն ունենք»: Չէ՞ որ Ադրբեջանի շատ բարձրաստիճան պաշտոնյաներ խոսում էին «Ղարաբաղի համար ինքնավարության ամենաբարձր կարգավիճակի» մասին: Երկրորդը. պետք չէ մոռանալ Նախիջևանի խորհրդանշական նշանակությունը Հեյդար Ալիևի համար: Հեյդար Ալիևը հետխորհրդային Ադրբեջանի միայն երրորդ նախագահն է, սակայն պաշտոնական նարատիվում հենց նա է հիմնադիր հայր համարվում: 1990 թվականի հունվարին Նախիջևանի ինքնավարության Գերագույն խորհրդի հերթական նստաշրջանում որոշում էր ընդունվել ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին: Եվ այն ժամանակ Նախիջևանը պայմանական «անվտանգ հանգրվան» դարձավ Հեյդար Ալիևի համար, իսկ հետո՝ հարթակ մեծ քաղաքականություն նրա վերադարձի համար՝ արդեն ոչ թե որպես կուսակցական առաջնորդ, այլ որպես անկախ Ադրբեջանի առաջնորդ:

Այսօր Իլհամ Ալիևը, բնականաբար, չհերքելով այս նարատիվը, փորձում է կերտել իր սեփական կերպարը, որում իր արժանիքները պայմանավորված են ոչ միայն իր մեծ հոր որդին լինելու հանգամանքով: Ի դեպ, նախագահի աշխատակազմի բազմամյա ղեկավար Ռամիզ Մեհթիևը, ում հիմա մեղադրում են պետական դավաճանության համար, երկար տարիներ համարվում էր երկրորդ «գլխավոր նախիջևանցին»՝ Հեյդար Ալիևից հետո:

– Արդյո՞ք Նախիջևանի Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելը պետք է լրացուցիչ անհանգստության առիթ դառնա հայկական կողմի համար:

– Ես վաղուց եմ աշխատում հայ փորձագետների հետ և նրանցից շատերի մեջ հակում եմ նկատում դեպի արդեն հիշատակված «իրավական ֆետիշիզմ»: Նրանք ամենայն լրջությամբ փորձում են ապացուցել Մոսկվայի և Կարսի պայմանագրերի ոչ լեգիտիմ լինելը և, ընդհակառակը, ցույց տալ Վուդրո Վիլսոնի ծրագրերի՝ այսպես կոչված «վիլսոնյան Հայաստանի» իրավական հիմնավորվածությունը: Սակայն, կրկնում եմ՝ սահմանադրական և պայմանագրային նորմերը ոչինչ են առանց քաղաքական ուղեկցման, առանց «գետնի վրա» առկա աշխարհաքաղաքական իրականության: Հետևաբար՝ ինչո՞ւ պետք է Նախիջևանի Սահմանադրության փոփոխությունները հայկական կողմի համար անհանգստության առիթ դառնան:

– Իսկ կարո՞ղ են Նախիջևանի Սահմանադրության փոփոխությունները որոշակի դիսկոմֆորտ առաջացնել Ռուսաստանի մոտ:

– Կրկին՝ ոչ: Ռուսաստանը Կովկասում իր գործողություններում առաջնորդվում է նրանով, ինչ միջազգային հարաբերությունների տեսության մեջ անվանում են «ռեալիզմ»: Եվ այս իմաստով Ռուսաստանի մոտ շատ ավելի մեծ դիսկոմֆորտ կարող են առաջացնել ենթադրյալ «Թրամփի ուղին» կամ ՀԿԵ-ի (Հարավկովկասյան երկաթուղի) և ատոմակայանի վերաբերյալ Հայաստանի ծրագրերը:

– «Ինքնավար» բառն արդեն ատավիզմ է, թե՞ Նախիջևանում ինքնավարության որոշակի տարրեր կպահպանվեն: Եվ ընդհանրապես, կարելի՞ է խոսել ինքնավար կառավարման այս կամ այն ձևի մասին մի երկրում, որն ունի այդչափ կենտրոնացված և անձնավորված կառավարման համակարգ:

– Մոդելները կարող են շատ տարբեր լինել: Հաճախ ավտորիտար համակարգ ունեցող երկրները կարող են կիսաինքնավար տարածաշրջաններ ունենալ: Օրինակ՝ Պակիստանը: Կարելի է հիշել նաև աֆրիկյան երկրները, օրինակ՝ Չադիրը Մոբուտուի ժամանակաշրջանում: Դժվար թե Մոբուտուին կարելի է ժողովրդավար որակել, սակայն որոշ տարածքներ նա լիովին չէր վերահսկում:

Սակայն դա Ադրբեջանի դեպքը չէ: Ակնհայտ է, որ տվյալ բարեփոխման նպատակն է ցույց տալ, որ Ադրբեջանը փորձում է հեռանալ որոշակի «խնամակալությունից», և դա անում է հենց Մոսկվայի պայմանագրի ստորագրման 105-ամյակի նախաշեմին: Դա ուղերձ է այն մասին, որ Ադրբեջանը դուրս է եկել «կրտսեր եղբոր» դերից: Եթե ուշադիր ընթերցենք փոփոխությունների տեքստը, այն միտված է տարածաշրջանի հատուկ կարգավիճակը բովանդակազրկելուն և նախագահական կառավարումն ուժեղացնելուն: Իլհամ Ալիևը Ղարաբաղում հաղթանակի շահառուն է, և այսօր նա լրացնում է իր՝ «հողեր հավաքագրողի» կերպարը:

ՍԵՐԳԵՅ ՄԱՐԿԵԴՈՆՈՎԻ ՀԵՏ ԶՐՈՒՅՑԵԼ Է ԱՐԱ ԹԱԴԵՈՍՅԱՆԸ

ԱՄՆ-ի և Իրանի միջև ստորագրվել է հրադադարի համաձայնագիր

Ամերիկացի և իրանցի պաշտոնյաները հայտնում են, որ Միացյալ Նահանգների նախագահ Դոնալդ Թրամփը և Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը թվային տարբերակով ստորագրել են երկու երկրների միջև պատերազմը դադարեցնող շրջանակային համաձայնագիրը:



Reuters-ի հաղորդմամբ՝ ենթադրվում է, որ Իրանում 1979 թվականի Իսլամական հեղափոխությունից հետո սա ԱՄՆ և Իրանի նախագահների կողմից համատեղ ստորագրված առաջին փաստաթուղթն է:

Վաշինգտոնն ու Թեհրանը նաև հրապարակել են փոխըմբռնման հուշագրի տեքստը: Այնուամենայնիվ, նախագահ Թրամփը սպառնացել է վերսկսել Իրանի դեմ հարվածները, եթե Թեհրանը չկատարի իր ստանձնած պարտավորությունները:

«Մենք նրանց գրողի ծոցը կուղարկենք ռմբակոծություններով, եթե նրանք խախտեն համաձայնագիրը, – Ֆրանսիայում G7-ի գագաթնաժողովի շրջանակում մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է Թրամփը՝ հավելելով. – **Ես չեմ ցանկանում, որ դա տեղի ունենա: Ես ուզում եմ, որ նրանք հարգեն համաձայնագիրը»:**

Սպիտակ տան ղեկավարի խոսքով՝ «արդար չի լինի», եթե Թեհրանը բալիստիկ հրթիռներ չունենա: Նախկինում Թրամփը խոստացել էր ամբողջությամբ ոչնչացնել Իրանի բալիստիկ հրթիռները:

Թեհրանից Իրանի բանակցային պատվիրակությունը գլխավորող Մոհամմադ Բաղեր Ղալիբաֆն է մեկնաբանել ձեռքբերված հուշագիրը. **«Այն ամենը, ինչին մենք ձգտում էինք հասնել ռազմական գործողությունների միջոցով, բանակցությունների արդյունքում ստացել ենք մի քանի անգամ ավելին»,** – պետական հեռուստատեսությանը ասել է Ղալիբաֆը:

14 կետից բաղկացած փաստաթուղթը շրջանցում է մի շարք առանցքային հարցեր, օրինակ՝ Իրանի միջուկային ծրագրի ապագան՝ թողնելով դա հետագա համապարփակ համաձայնագրին: 60-օրյա բանակցային ժամկետ է սահմանվում, որի սկիզբը կազդարարվի...

Փաստաթղթի համաձայն՝ Վաշինգտոնն ու Թեհրանը հայտարարում են «անհապաղ և մշտական հրադադար» պատերազմի բոլոր ճակատներում, այդ թվում՝ Լիբանանում: Կողմերը պարտավորվում են միմյանց դեմ նոր պատերազմ կամ ռազմական գործողություններ չսկսել և զերծ մնալ ուժի կիրառումից կամ դրա սպառնալիքից:

Կողմերը նաև պարտավորվում են հարգել միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը և չմիջամտել միմյանց ներքին գործերին:

Վաշինգտոնն ու Թեհրանը համաձայնում են 60 օրվա ընթացքում բանակցել վերջնական համաձայնագրի շուրջ: Ժամկետը կարող է երկարաձգվել փոխադարձ համաձայնությամբ:

ԱՄՆ-ը 30 օրվա ընթացքում պետք է ամբողջությամբ դադարեցնի իրանական նավահանգիստների շրջափակումը:

Հորմուզի նեղուցի մասով Թեհրանը պարտավորվում է 60 օրով առանց տուրքերի ապահովել առևտրային նավերի երթևեկությունը Պարսից ծոցից Օմանի ծով և հակառակ ուղղությամբ: Հուշագրում նշվում է, որ Իրանը Օմանի, ինչպես նաև Պարսից ծոցի մերձափնյա այլ պետությունների հետ կքննարկի Հորմուզի նեղուցի հետագա կառավարումն ու ծովային ծառայությունների հարցը:

Իրանի վերակառուցման և տնտեսական զարգացման համար ԱՄՆ-ը տարածաշրջանային գործընկերների հետ կմշակի առնվազն 300 միլիարդ դոլարի ծրագիր:

Վաշինգտոնը նաև համաձայնեցված ժամանակացույցով պետք է դադարեցնի Թեհրանի դեմ սահմանված պատժամիջոցները: Մինչ այդ ԱՄՆ ֆինանսների նախարարությունը ժամանակավորապես կչեղարկի իրանական նավթամթերքի արտահանման սահմանափակումները:

ԱՄՆ-ը հասանելի կդարձնի նաև Իրանի սառեցված կամ սահմանափակված միջոցներն ու ակտիվները: Դրա կարգը կողմերը պետք է առանձին համաձայնեցնեն:

Իրանը վերահաստատում է, որ միջուկային զենք չի ստեղծի: Հարստացված նյութերի մասով Թեհրանը պարտավորվում է Ատոմային էներգիայի միջազգային գործակալության վերահսկողությամբ առնվազն տարալուծել պաշարները:

Մինչև վերջնական համաձայնագրի կնքումը Իրանը կպահպանի իր միջուկային ծրագրի ներկայիս վիճակը, իսկ Վաշինգտոնը նոր պատժամիջոցներ չի սահմանի և լրացուցիչ զորքեր չի տեղակայի տարածաշրջանում:

Կողմերը նաև կստեղծեն մեխանիզմ՝ հուշագրի դրույթների իրականացումը վերահսկելու համար:

18.06.2026

Իրանական Mehr լրատվական գործակալությունը հրապարակել է Իրանի և Միացյալ Նահանգների միջև փոխըմբռնման հուշագրի նախագիծը:

Փաստաթուղթը բաղկացած է 14 կետից.

1. Ռազմական գործողությունների հրատապ և անժամկետ դադարեցում բոլոր ուղղություններում, այդ թվում՝ Լիբանանում:
2. ԱՄՆ-ի երաշխիքներն Իրանի ներքին գործերին չմիջամտելու և Իսլամական Հանրապետության ինքնիշխանությունը ճանաչելու վերաբերյալ:
3. Ծովային շրջափակման ամբողջական վերացում 30 օրվա ընթացքում:
4. ԱՄՆ զինված ուժերի դուրսբերումն Իրանի մերձակա տարածքներից:
5. Հորմուզի նեղուցով ազատ նավարկության վերականգնումը:
6. Իրանական նավթի արտահանման սահմանափակումների դադարեցում:
7. ԱՄՆ-ն և նրա դաշնակիցները պատրաստում են 300 միլիարդ դոլարի ծրագիր՝ Իրանի ենթակառուցվածքները վերականգնելու համար:
8. Վերջնական համաձայնագիր պատրաստելու համար 60-օրյա ժամկետով բանակցություններ:
9. Թեհրանի հանձնառությունը՝ հրաժարվել միջուկային զենքի արտադրությունից:
10. Վաշինգտոնի պարտավորությունը՝ բանակցությունների ընթացքում լրացուցիչ պատժամիջոցներ չկիրառելու կամ տարածաշրջանում իր ռազմական ներկայությունը չմեծացնելու վերաբերյալ:
11. Իրանի 24 միլիարդ դոլարի ակտիվների ապասառեցում:
12. Համաձայնագրերի կատարման մոնիթորինգի մեխանիզմի ստեղծում:
13. Վերջնական համաձայնագրի հաստատումը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևով:
14. Վերջնական բանակցությունները կսկսվեն միայն Իրանի սառեցված ակտիվների կեսի ապասառեցման, նավթային պատժամիջոցների մեղմացման և ծովային շրջափակման վերացման պարագայում: //

«Մեծ Հայք» պարային ստուդիան հինգ տարեկան է. նվիրումի, ազգային արժեքների պահպանման և ստեղծագործական հաջողությունների արգասավոր ժամանակաշրջան

Հունիսի 14-ին Գորիսի Վաղարշ Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դահլիճում տեղի ունեցավ «Մեծ Հայք» պարային ստուդիայի գործունեության 5-րդ տարեդարձին նվիրված երեկո, որն ամփոփեց տարիների աշխատանքը, նվիրումը, սերն ու ստեղծագործական ուղին:

Հոբելյանական համերգի ընթացքում հանդիսատեսին ներկայացվեցին 14 նոր բեմադրություն և նոր տարազներ, որոնք ստեղծվել էին հատուկ իրադարձության համար:

Երեկոն լի էր ազգային ոգով, գունեղ բեմադրություններով և հուզիչ պահերով, որոնք ևս մեկ անգամ վկայեցին՝ «Մեծ Հայքը» ոչ միայն պարային ստուդիա է, այլև մեծ ընտանիք և արժեքներ կրող համույթ:

Հոբելյանական միջոցառումը համախմբել էր պարարվեստի ոլորտի ճանաչված ներկայացուցիչների հանրապետության տարբեր մարզերից և մայրաքաղաքից:

Երեկոյի պատվավոր հյուրերն էին՝

- Վանաձորի «Հորովել» երգի-պարի անսամբլի գլխավոր բալետմայստեր, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Վանաձորի մասնաճյուղի պարարվեստի բաժնի դասախոս, ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալակիր Արայիկ Գևորգյանը,
- Prof Art» պարային ստուդիայի գեղարվեստական ղեկավար Տիգրան Մնոյանը,
- «Հայասի» պարային համույթի գեղարվեստական ղեկավար Արսեն Մուշեղյանը,
- Վանաձորի «Հորովել» երգի-պարի անսամբլի բալետմայստեր-փոր-

Գորիսում կայացավ «Ակսել Բակունցը արդի գիտական ընթերցումների մեջ» հանրապետական գիտաժողովը



2026 թվականի հունիսի 12–13-ին Գորիսում կայացավ «Ակսել Բակունցն արդի գիտական ընթերցումների մեջ» խորագրով հանրապետական գիտաժողովը՝ նվիրված հայ մեծանուն արձակագիր Ակսել Բակունցի ծննդյան 127-ամյակին:

Գիտաժողովը կազմակերպվել էր «Ակսել Բակունց» գիտամշակութային հիմնադրամի և Ակսել Բակունցի տուն-թանգարանի նախաձեռնությամբ՝ նպատակ ունենալով համախմբել Բակունցի ստեղծագործության ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականներին և հետազոտողներին, խթանել բակունցագիտական ուսումնասիրությունները և ձևավորել Բակունցի գրական ժառանգության արդի գիտական ընթերցումների կայուն հարթակ:

Գիտաժողովը համախմբել էր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության տարբեր գիտական, կրթական և մշակութային հաստատությունների ներկայացուցիչների: Մասնակիցների թվում էին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Հայաստանի ազգային գրադարանի, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի, Շիրակի պետական համալսարանի, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայ-ռուսական համալսարանի, Գավառի պետական համալսարանի, Երևանի «Գլաձոր» համալսարանի, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի, «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրի, ինչպես նաև Ռուսաստանում ՀՀ դեսպանատան մշակույթի կենտրոնում գործող հայագիտական ամբիոնի ներկայացուցիչներ:

Գիտաժողովի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ Գորիսի «Իմփաքթ Հաբ Սյունիք» կոնֆերանս սրահում: Մասնակիցներին ողջունեցին «Ակսել Բակունց» գիտամշակութային հիմնադրամի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Թեհմինա Մարությանը, Ակսել Բակունցի տուն-թանգարանի վարիչ Վարդան Սարգսյանը, Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Տիգրան քահանա Հակոբյանը և հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ, Գորիս համայնքի նախկին ղեկավար Նելսոն Ոսկանյանը:

Բացման խոսքում Թեհմինա Մարությանն ընդգծեց, որ «Բակունցի գրական ժառանգությունը արժանի է ունենալու իր մշտական գիտական հարթակը, որտեղ տարբեր սերունդների հետազոտողներ կհանդիպեն, կներկայացնեն նոր ուսումնասիրություններ և միասին կնպաստեն բակունցագիտության զարգացմանը»: Նա նշեց նաև, որ տարիներ շարունակ ունեցել է այն համոզմունքը, որ Բակունցին նվիրված գիտական ընթերցումները չպետք է լինեն մեկանգամյա նախաձեռնություններ, այլ վերածվեն ամենամյա ավանդույթի՝ համախմբելով Բակունցի ստեղծագործության հետազոտողներին նրա հայրենի Գորիսում:

Ողջույնի խոսքում առանձնակի շեշտադրվեց նաև գիտաժողովի անցկացման խորհրդանշական նշանակությունը: «Գորիսը Բակունցի համար պարզապես ծննդավայր չէր: Այն նրա ստեղծագործական աշխարհի, գեղարվեստական մտածողության, բնության, լեզվի և հիշողության ակունքն էր: Ուստի Բակունցի մասին խոսել նրա հայրենի քաղաքում նշանակում է ոչ միայն ուսումնասիրել նրա գրականությունը, այլև հաղորդակից լինել այն միջավայրին, որտեղ ձևավորվել է նրա արվեստը»,- նշեց Թեհմինա Մարությանը:

Երկօրյա գիտաժողովի ընթացքում ներկայացվեցին Բակունցի ստեղծագործության գրականագիտական, լեզվաբանական, հոգելեզվաբանական, մշակութաբանական և կրթական տարբեր խնդիրներին նվիրված զեկուցումներ: Քննարկումների առանցքում էին Բակունցի գեղարվեստական աշխարհը, լեզվամտածողությունը, ստեղծագործությունների արդիական ընկալումները, միջտեքստային կապերը, կերպարների և բնաշխարհի գեղագիտությունը, գրողի ստեղծագործությունների ուսուցման ժամանակակից մեթոդները:

Գիտաժողովի մասնակիցներն այցելեցին նաև Ակսել Բակունցի տուն-թանգարան, որտեղ գիտական քննարկումները շարունակվեցին արդեն մեծ գրողի ստեղծագործական միջավայրում՝ վերածվելով մասնագիտական ու մշակութային հետաքրքիր երկխոսության:

Հունիսի 13-ին գիտաժողովի մասնակիցները միացան Ակսել Բակունցի ծննդյան 127-ամյակին նվիրված համաքաղաքային միջոցառումներին, մասնակցեցին գրողի հուշարձանի մոտ կազմակերպված ծաղկեդրմանը և տուն-թանգարանի մշակութային ծրագրերին:

Հատկանշական էր, որ Բակունցյան օրերը մեկ հարկի տակ համախմբեցին

Ճավար, «Լոռվա ձորի» պարի հանրապետական փառատոնի գեղարվեստական ղեկավար, ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալակիր Մանվել Ալևորյանը:

Հոբելյանական երեկոյի ընթացքում «Մեծ Հայք» պարային ստուդիայի ղեկավար Համլետ Իսախանյանը պարգևատրվեց «Հայաստանի ազգային պարարվեստի միություն-30» հուշամեդալով: Պարգևը հանձնվեց Հայաստանի ազգային պարարվեստի միության նախագահ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Կարեն Գևորգյանի անունից, ով, միաժամանակ, տեսաուղերձով շնորհավորեց համույթի ծննդյան 5-րդ տարեդարձը և ողջունեց երեկոյի մասնակիցներին:

Նշանակալի գնահատանքի արժանացան նաև ստուդիայի ղեկավարներ Համլետ Իսախանյանը և Կարինե Վարդանյանը. նրանք պարգևատրվեցին շնորհակալագրով՝ պարարվեստի զարգացման, երիտասարդ սերնդի գեղարվեստական դաստիարակության, ազգային արժեքների պահպանման և փոխանցման գործում ունեցած ներդրման համար: Շնորհակալագրերը հանձնվեց Մանվել Ալևորյանի կողմից:

«Մեծ Հայք» պարային ստուդիան արժանացավ նաև Գորիսի համայնքապետարանի շնորհակալագրին՝ հայ ազգային մշակույթի պահպանման, զարգացման ու տարածման, ինչպես նաև երիտասարդ սերնդի գեղագիտական և հայրենասիրական դաստիարակության գործում ունեցած նշանակալի ավանդի համար:

Շնորհակալագրերի արժանացան նաև ստուդիայի պարուսույցները, որոնց ներդրումը չէր կարելի չնկատել:

Այդ բոլոր գնահատականները տարիների աշխատանքի, հետևողականության և արվեստին նվիրվածության արդյունք են:

Հինգ տարվա ընթացքում «Մեծ Հայքը» ձևավորվել է որպես ուժեղ թիմ, մեծ ընտանիք և ազգային արժեքների պահպանման կարևոր օջախ:

Իսկ երեկոյի թագն ու պսակը ստուդիայի սաների պարային կատարումներն էին, որոնք աչքի էին ընկնում կատարողական բարձր արվեստով:

Տոնական երեկոն վարում էր ՀՀ վաստակավոր լրագրող, ճանաչված հաղորդավար և դերասան Սարգիս Նաջարյանը: Ի դեպ, դահլիճը բուռն ծափահարություններով ընդունեց Սարգիս Նաջարյանի՝ Սայաթ-Նովայի տաղերից հայտնի հատվածի ասմունքը: //

Գիտնականներին, գրականագետներին, արվեստագետներին, մշակույթի գործիչներին, ուսուցիչներին, ուսանողներին և Բակունցի ստեղծագործության բազմաթիվ ընթերցողներին՝ ևս մեկ անգամ հաստատելով, որ մեծ գրողի ժառանգությունը շարունակում է ապրել ոչ միայն գրականության, այլև գիտության, արվեստի և հանրային կյանքի տարբեր ոլորտներում:

Գիտաժողովի ավարտին «Ակսել Բակունց» գիտամշակութային հիմնադրամի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Թեհմինա Մարությունը մասնակիցներին հանձնեց հավաստագրեր՝ «Ակսել Բակունցը արդի գիտական ընթերցումների մեջ» հանրապետական գիտաժողովին մասնակցության և գիտական զեկուցումներով հանդես գալու համար՝ շնորհակալություն հայտնելով նրանց Բակունցի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրության, արդի գիտական ընթերցումների խթանման և բակունցագիտության զարգացման գործում ունեցած ներդրման համար:

Գիտաժողովի ընթացքում բազմիցս ընդգծվեց, որ Ակսել Բակունցը ոչ միայն հայ դասական գրականության մեծագույն ներկայացուցիչներից է, այլև մեր օրերի կենդանի մշակութային ներկայություն, որի ստեղծագործությունը շարունակում է նոր հետազոտությունների առիթ տալ, միավորել սերունդներին և նորովի բացահայտել հայրենի աշխարհի անանց գեղեցկությունը:

Կազմակերպիչների համոզմամբ՝ «Բակունցյան ընթերցումները» կոչված են դառնալու ամենամյա գիտամշակութային հարթակ, որը Բակունցի հայրենի Գորիսում կհամախմբի նրա ստեղծագործության հետազոտողներին և կնպաստի բակունցագիտության հետագա զարգացմանն ու մեծ գրողի ստեղծագործական ժառանգության նորովի արժևորմանը:

Այս երկու օրերը ևս մեկ անգամ հաստատեցին, որ Ակսել Բակունցի ստեղծագործությունը շարունակում է մնալ արդիական՝ միավորելով տարբեր սերունդների հետազոտողների, գրականագետների և ընթերցողների: Նրա գրական ժառանգությունը նոր ուսումնասիրությունների, նոր բացահայտումների և գիտական երկխոսության անսպառ աղբյուր է:

«Բակունցյան ընթերցումները» դարձան այդ երկխոսության կարևոր հարթակը՝ մեկտեղելով գիտությունը, մշակույթը և Բակունցի հայրենի քաղաքի հիշողությունը: Վստահ ենք, որ այս նախաձեռնությունը կունենա իր շարունակությունը և տարեցտարի կնպաստի բակունցագիտության զարգացմանն ու մեծ գրողի ստեղծագործական ժառանգության նորովի արժևորմանը:

«Ակսել Բակունց» գիտամշակութային հիմնադրամը և Ակսել Բակունցի տուն-թանգարանը խորին շնորհակալություն են հայտնում գիտաժողովի բոլոր մասնակիցներին, զեկուցողներին, գործընկերներին և աջակիցներին՝ նախաձեռնության հաջող իրականացմանն աջակցելու և Բակունցի ստեղծագործական ժառանգության հանրահռչակման գործին իրենց ներդրումն ունենալու համար:

Առանձնակի երախտագիտություն ենք հայտնում գիտաժողովի գործընկերներին և աջակիցներին՝ «Միրհավ» և «Մինա» հյուրանոցային համալիրներին՝ ի դեմս Շահեն Զեյթունցյանի և Ժորա Ալեքսանյանի, ինչպես նաև «Ակսել Բակունց» գիտամշակութային հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ, Գորիս համայնքի նախկին ղեկավար, գործարար Նելսոն Ոսկանյանին՝ նախաձեռնության կայացմանն ու իրականացմանն աջակցելու համար:

Համոզված ենք, որ Բակունցի հայրենի Գորիսում ձևավորվող այս գիտամշակութային ավանդույթը նոր հնարավորություններ կստեղծի մեծ գրողի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրության, հանրահռչակման և արժևորման համար:

«ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ»
ԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Խոսք հիշատակի. կյանքից հեռացել է Սյունյաց աշխարհի նշանավոր զավակ, ճանաչված պատմաբան Կլիմենտ Հարությունյանը

Մայիսի 24-ին երկրային կյանքին հրաժեշտ տվեց պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կլիմենտ Ամասիայի Հարությունյանը:

Ծնվել է 1940 թվականին Կապանում շիկահողցի ծնողների ընտանիքում: 1947-1957 թվականներին սովորել և ավարտել է Ղափանի թիվ 2 միջնակարգ դպրոցը:

1961-1966 թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետի ցերեկային բաժինը:

Ինստիտուտն ավարտելուց հետո երկու տարի աշխատել է Հայաստանի նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվում՝ կրտսեր, ապա՝ ավագ գիտաշխատող, ձեռք բերել արխիվային փաստաթղթերի հետ աշխատելու փորձ:

Առաջին գիտական գործերը տպագրել է «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում:

1968 թ. դեկտեմբերին ընդունվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ասպիրանտուրան:

Ավարտելուց հետո աշխատել է նույն ինստիտուտում՝ նախ՝ կրտսեր, ապա՝ ավագ և առաջատար գիտաշխատող, 1994 թվականի հունիսից՝ «Հայ ժողովրդի մասնակցությունը համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին» բաժնի վարիչ, այնուհետև՝ «Հայոց զինվորականության պատմությունը» թեմատիկ խմբի ղեկավար, 2015-ից՝ գլխավոր գիտաշխատող:

Կլիմենտ Հարությունյանը 1979-ին պաշտպանել է թեկնածուական, 1994-ին դոկտորական ատենախոսություն: Մասնագիտացել է Հայաստանի առաջին հանրապետության բանակի, Խորհրդային Հայաստանի հայկական ազգային միավորումների և զինվորական մամուլի, Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին հայ ժողովրդի մասնակցության պատմության, հայ մարշալների, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գեներալների կենսագրությունների լուսաբանման հիմնահարցերում:

Կլիմենտ Հարությունյանը հրատարակել է 29 մենագրություն, համահեղինակ է 14 գրքերի ու ժողովածուների, ավելի քան 100 գիտական ու հրապարակախոսական հոդվածի:

Կլիմենտ Հարությունյանը մասնակցել է նաև «Հայաստանի ազգային ատլաս», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլաս», «Հուշամատյան», «Հայոց պատմություն» հիմնակազմ աշխատությունների հրատարակության գործերին, մասնակցել է հանրապետական և միջազգային ավելի քան 30 գիտաժողովի: Նրա գրքերից 12-ը լույս է տեսել ռուսերեն:

Բացի վերոհիշյալներից՝ Կլիմենտ Հարությունյանը խմբագրել է 28 և գրախոսել 14 գիրք:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է չորս թեկնածուական, ընդդիմախոսությամբ՝ հինգ ատենախոսություն:

Այդ ամենի հետ մի շարք բուհերում տարիներ շարունակ եղել է ավարտական քննությունների պետական հանձնաժողովի նախագահ, երկար տարիներ՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի անդամ, արհկոմի նախագահ:

Գիտական հայրենանվեր աշխատանքի համար պարգևատրվել է «Մովսես Խորենացի», «Մարշալ Բաղրամյան», «Վազգեն Սարգսյան», «Գարեգին Նժդեհ», «Հունան Ավետիսյան», «Տիգրան Մեծ», «Ծովակալ Իսակով» և այլ մեդալներով:

Կլիմենտ Հարությունյանի ուշադրությունից դուրս չեն մնացել իր բնօրրան Սյունիքի պատմությանն առնչվող մի շարք հարցեր:

Այդ տեսակից հատկապես ուշագրավ է «Սյունիքի զավակների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945 թթ.)» մենագրությունը:

Մենագրության մեջ առաջին անգամ ՌԴ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվի նյութերի, համապատասխան գրականության և մամուլի հիման վրա հայ պատմության մեջ լուսաբանված է Սյունիքի զավակների 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի մասնակցության հիմնահարցը: Հատկապես մեծ ուշադրություն է դարձված սյունեցիներից Խորհրդային Միության հերոսի, «Փառքի շքանշանի» երեք աստիճանների, պարգևատրվածների և գեներալի կոչման արժանացածների, կառավարման բարձր շքանշանների արժանացած հրամանատարների և զինվորների սխրանքների, թիկունքի աշխատողների հերոսական աշխատանքի վերհանմանը:

Մեծ հայրենականի մասնակցելու համար Սյունիքի զավակներից զինվորագրվել է 22946 մարդ, որոնցից 10680 հոգի նահատակվել է ռազմի դաշտում: Եվ այդ նահատակներից յուրաքանչյուրի մասին հավաստի տեղեկություններ են գտել այդ գրքում:

Նման ծավալի աշխատանք կարող էր կատարել միայն Սյունյաց աշխարհի ու հայրենակիցների հանդեպ բացառիկ սիրով տոգորված անձնավորությունը:

Կլիմենտ Հարությունյանը «Սյունյաց երկիր» թերթի ջերմ ու անկեղծ բարեկամներից էր:

Խմբագրության գրադարանում սիրով են պահպանվում այն գրքերը, որոնք ընծայագրով նվիրել է թերթի խմբագրին:

Ծննդավայր Կապանում լինելիս նա պարտադիր այցելում էր «Սյունյաց երկրի» խմբագրություն և հիացական կարծիք հայտնում թերթի հատկապես բացառիկ համարների վերաբերյալ՝ դրանցից յուրաքանչյուրը համարելով անփոխարինելի սկզբնաղբյուր մեր երկրամասի պատմությամբ հետաքրքրվողի համար:

Այնպես որ՝ Կլիմենտ Հարությունյանի մահվամբ մեծ կորուստ կրեցին ոչ միայն հանրապետության հայագիտական շրջանակները, ոչ միայն նրա հարազատներն ու մերձավորները, այլև «Սյունյաց երկիրը», ինչի համար մեր ափսոսանքն ենք հայտնում:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի:

Ֆրանկոֆոն կենտրոնի բացում Քաջարանում

Այդ առիթով լեռնագործների քաղաք էր ժամանել մի պատկառելի պատվիրակություն՝ Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Օլիվե Դըկոտինյին, Վիենի քաղաքապետ, «Օվերն-Ռոն-Ալպ Սյունիք» ցանցի նախագահ Թիերի Կովաքսը, Քաջարանի քույր քաղաք Սեն Շամոնի փոխքաղաքապետ Քեթրին Շապարը, «Օվերն-Ռո-Ալպ-Սյունիք» համագործակցության ցանցի քաղաքական կոորդինատոր Լևոն Սաքունցը, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան աշխատակիցները, Կապանի համայնքապետի տեղակալը, Մեղրիի համայնքապետը և պաշտոնատար այլ անձինք: Նրանց Քաջարանի մշակույթի պալատում ընդունեցին հավուր պատշաճի, կենտրոնի սաները հանդես եկան գրական-երաժշտական համադրույթով, կատարեցին Հայաստանի և Ֆրանսիայի հանրապետությունների պետական օրհներգերը:

Իրենց ելույթներում Քաջարանի քաղաքապետ Մանվել Փարամազյանը, դեսպան Օլիվե Դըկոտինյին, Սեն Շամոնի քաղաքապետ Քեթրին Շապարը, մյուս բանախոսները կարևորեցին կենտրոնի դերը՝ համոզմունք հայտնելով, որ այն կդառնա հանդիպումների, բարեկամության կենդանի վայր բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են բացահայտել, կիրառել և տարածել ֆրանսերենը և ֆրանկոֆոն մշակույթը: Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ուսուցողական կենտրոնի ղեկավար Մարինե Ղահրամանյանը ներկայացրեց Քաջարանում Հայաստանի հարավի ֆրանկոֆոն նորարարության և ներդրումների բևեռի ստեղծման նախագիծը:

Ինչպես պաշտոնական արարողությունից հետո «Սյունյաց երկրին» փոխանցեց ֆրանկոֆոն կենտրոնի համակարգող Արփինե Զեյնալյանը, դասընթացները կենտրոնում մեկնարկել են հունվարի երկրորդ կեսից, սաները ֆրանսերենի և ֆրանկոֆոն մշակույթի մեջ հմտանում են մի քանի խմբով: Առայժմ կենտրոն է հաճախում 85 հոգի: Մեր զրուցակիցը նաև փոխանցեց, որ պարապմունքների ժամանակ իրենք շեշտը դնում են խոսակցականի վրա, որ դյուրին լինի շփվելը ֆրանսիացիների հետ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Քաջարանի թունելի շինարարության մեկնարկը. կառուցումը կտևի 6 տարի

Հունիսի 27-ին տեղի է ունեցել Քաջարանի թունելի շինարարության մեկնարկի պաշտոնական արարողությունը, որին մասնակցել են ԻԻՀ նախագահի տեղակալ Սեյեդ Համիդ Փուրմոհամադիին, ՀՀ փոխվարչապետ Միհր Գրիգորյանը, ՀՀ ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանը, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Արկադի Չերչինյանը, դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ, ԱԺ պատգամավորներ և այլ հյուրեր:

Հյուրերը նախ շրջայց են կատարել Քաջարան-Ագարակ 32 կմ ճանապարհահատվածի արդեն իսկ փորված երկու թունելներում, ծանոթացել կատարված աշխատանքին:

Շրջայցից հետո տեղի է ունեցել Քաջարանի թունելի կառուցման պայմանագրի ստորագրման հանդիսավոր արարողությունը:

Քաջարանի թունելի կառուցումը Հյուսիս-հարավ ավտոմայրուղու փուլերից մեկն է, որը հնարավորություն կտա ամբողջությամբ գործարկել Հյուսիս-հարավի առաջնահերթ համարվող հարավային հատվածի մեծ մասը:

Քաջարանի թունելի կառուցմամբ ներկայում գործող երթուղին կկրճատվի մոտ 14 կմ-ով, տրանսպորտային միջոցների միջին արագությունը 50 կմ/ժ-ից կհասնի 80 կմ/ժ-ի, մոտ 40 րոպեով կկրճատվի երթևեկության ժամանակը:

Թունելի միջոցով կշրջանցվի ծովի մակերևույթից 2535 մ բարձրության վրա գտնվող Մեղրու լեռնանցքը, ինչը զգալիորեն կբարձրացնի ճանապարհային անվտանգության մակարդակը, ինչպես նաև հնարավորություն կստեղծի խուսափել ձմռանը Մեղրու լեռնանցքի անցանելիության ապահովման հետ կապված դժվարություններից:

Քաջարանի թունելի կառուցման ծրագիրն իրականացվելու է Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի կողմից հատկացված 200 միլիոն ԱՄՆ դոլար վարկային միջոցներով և շուրջ 195 միլիոն ԱՄՆ դոլար Հայաստանի Հանրապետության համաֆինանսավորմամբ:

Շինարարական աշխատանքները կսկսվեն 2026 թվականին և նախատեսվում է ավարտել 6 տարվա ընթացքում:

Ծրագրի շրջանակներում կկառուցվի ոչ միայն Քաջարանի թունելը՝ 7,2 կմ ընդհանուր երկարությամբ, այլև շուրջ 4 կմ մոտեցնող ճանապարհներ:

Քաջարանի թունելի և մոտեցնող ճանապարհների կառուցման համար պայմանագիր է կնքվել իրանական «Աբատ Ռահան Պարս Ինթերնեյշնլ Գրուպ» և «Թունել Սադ Արիանա» համատեղ ձեռնարկության հետ:

Քաջարանի թունելի կառուցման պատվիրատուն է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը, որը հանդես է գալիս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության անունից:

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԿՈՐԵԼ Է Ժիրայր Սենիկի Պետրոսյանի ՊՆ Նախարարության կողմից 2016 թ. տրված ազատամարտիկի վկայականը՝ Մ-015538: Համարել անվավեր:

ԿՈՐԵԼ Է Բորիս Սամվելի Առուշանյանին պատկանող՝ 1991 թ. արտադրության, ՄՏԶ-82 մակնիշի տրակտորի (կապույտ գույն) պետհամարանիշը՝ 42-79 SL, վկայական՝ N 003260: Համարել անվավեր:

Սամվել Ալեքսանյանը՝ «Եվրասիա» միջազգային հիմնադրամի փորձագետների խորհրդի անդամ

ՀՀ վաստակավոր լրագրող, «Սյունյաց երկիր» պարբերականի հիմնադիր և գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանն ընտրվել է Մոսկվայում գործող «Եվրասիա» միջազգային հիմնադրամի 2026 թ. մրցանակաբաշխության փորձագիտական խորհրդի անդամ:

Հիշեցնենք՝ 2025 թվականի մրցանակաբաշխության արդյունքում Սամվել Ալեքսանյանն արժանացել էր միջազգային մրցույթներից երկուսի դափնեկրի կոչման:

Առաջին մրցանակը՝ «Անկեղծ տեսակետ», ստացել էր «Հրապարակախոսության և վավերագրության ժանրում լավագույն նյութի համար»: Երկրորդ մրցանակը՝ «Եվրասիայի ձայն. ոգեշնչել», հիմնադրամի 15 անվանակարգերից մեկն էր, որին արժանացել է լրագրության ոլորտում ունեցած վաստակի համար:

30.06.2026

Երգեհոնային երեկո. բեմահարթակում ռուս նշանավոր երգեհոնահարուհին էր

Այս անգամ ազդագիրը հրավիրում էր երգեհոնային երաժշտության երեկոյի: Կապանի արվեստի պետական քոլեջի երգեհոնային դահլիճի բեմահարթակը տրամադրվել էր ռուս նշանավոր երգեհոնահարուհի, Ռուսաստանի վաստակավոր արտիստ, Հյուսիսային Կովկասի պետական ֆիլհարմոնիայի տնօրեն Սվետլանա Բերեժնայային:

Մինչև համերգի սկսվելը հանդիսականին ողջունեց Հայաստանում «Ռոսսոտրուդնիչեստվոյի» ներկայացուցչության ղեկավարի տեղակալ Եկատերինա Անդրեևնան: Այնուհետև բարեմաղթանքի խոսք ասաց Կապանի արվեստի պետական քոլեջի տնօրեն Աշոտ Խաչատրյանը: Նա նշեց, որ երգեհոնը վաղուց Կապանի այցեքարտերից մեկն է դարձել: Անցյալ դարի 70-ական թվականներից Կապանում հնչեց երգեհոնային երաժշտություն՝ շնորհիվ Վահագն Ստամբոլցյանի, ում անունով կոչվում է արվեստի պետական քոլեջի դահլիճը:

Համերգի ընթացքում հնչեցին Պյոտր Չայկովսկու «Մանկական ալբոմը» և Մոդեստ Մուսորգսկու «Նկարներ ցուցահանդեսից» ստեղծագործությունները: Մեկուկես ժամ հանդիսականը երգեհոնային երաժշտության հնչյունների մոգական աշխարհում էր: Երկու կոմպոզիտորների լայնակտավ ստեղծագործությունների կատարումը ոգևորությամբ ընդունեց հանդիսականը՝ երկարատև ծափահարություններով և բացականչություններով: Որպես բիս՝ երգեհոնահարուհին հնչեցրեց Արամ Խաչատրյանի դաշնամուրային մանրանվագներից մեկը՝ «Անդանտինոն» և հանրահայտ «Սուսերով պարը»:

«Սյունյաց երկրի» հարցին, թե ինչո՞վ է պայմանավորված հատկապես Չայկովսկու և Մուսորգսկու երկու ստեղծագործությունների ներառումը համերգային ծրագրում, Սվետլանա Բերեժնայան փոխանցեց, որ համերգի կազմակերպիչներն իրեն առաջարկեցին մի քանի ծրագիր, որից ընտրեց ներկայացվածը: Նրա փոխանցմամբ՝ երգեհոնը շատ հաճախ ընկալվում է որպես եկեղեցական երաժշտության գործիք, ինչի համար իրեն խնդրեցին այս համերգին ներկայացնել գործիքի սիմֆոնիականությունը և թատերայնությունը:

Ի դեպ, Սվետլանա Բերեժնայան մորական կողմից հայուհի է: Ասում է՝ երբ պապը կենդանի էր, իրենց ընտանիքում հաճախ էր հնչում հայերենը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի:

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: ® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատունյաց փող., 70ա շենք

Ծավալը՝ 3 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 08.07.2026թ.: